

ՌՌՍՏԱՄ ԶԱԼ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԷՊ

(Մոկաց բարբառով)

Գրի առաւ

ԳԱՐԵԳՐՆ ՎԱՐԴ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Ա.



Շէնը էրկու թագաւոր, մէկ Իրան ի, մէկ
Թիւրան ի. Իրանայ թագաւորի անուն
Քեաւղըբաթ ի, Թիւրանայ թագաւորի ա-
նուն լէ Ալֆասիան-Ջաբ-Փիշաւ Թիւրանայ
թագաւոր նստաւ, ուր վզիր, փայաւանք-
տիր բիրադի ժողովից, էսաց.— Մինք տ'նր-
թանք զԻրան աւրինք, զԹիւրան աւայ
էնինք:

Յիտիւ Իրանայ թագաւոր աւախաւ.
աւախաւ էն էլ չրեոխկից իր վզիր, իր փայաւանքտիր, իր մարտիր բի-
րադի բարաւից: Առին էկան, էրկու ուրդու դիմաց մէ մէկու նստան.
պիրին սազիր զարկիցին, էրկու առին չիրար, կռուան. Իրանայ թագա-
ւոր կռտրուաւ, փախաւ, զԻրանայ տեղ առից, նստաւ չինի, էրկիր
զաւթից:

Ջալն էլ խաւիւրցիր ի, էլ դակղաթ չ'կայ կռիւ էնի: Էնու էլ
մէկ տղայ ի էդի, անուն Ռոստամ ի. Ռոստամ էլաւ տասնուչորս տա-
րեկան: Ասաց.— Ռոստամ, կինա, ասաց, մէ գետրդ բեակի մէջն ի, թէ
տիւ զգիւրդ վիրուցիր, գբի տը չրեոխկիմ խոզմաթ, թի տիւ զգիւրդ
չվիրուցիր, կինա քիւ նիտ անեղ առ, կինա, խատ ճժիրուն խաղա.
մինք մնացինք մէջ յուր դիւմաթին:

Ռոստամն էլ ինչ գնաց բեակի մէջ, ձեռ իտու զգետրդ վիրուց,
վեար բեադնին էթլ, կինաց, Ան էլ կանգնաւ, զՌոստամի զլեոխ

պագնից. ասաց.— Իշալահ, տիւ խզմթէն պկեր կ'կեաս: Անցկուն ի, գնա հախտախանի մէջ, մէկ ձի քե խամա առ, պիւ. էն էլ խարիր ձի մէկ եան ի կապած, խարիր մէկ եանի կապած էն էլ ձեռ վեար վուր ձիու քեամկին էտու, փուր առից գետըն: Իլաւ, տիւս իրի: Զալ ասաց.— Զի, եիս գքի ասի պեան քենէ չի կեայ, կինա տղէներու մէջ խաղա. մինք մնացինք եղսւրութեան մէջ չուր դիամաթին. էն էլ ասաց.— Զալ, տիւ ձի խամար ձի չըս պախը. էշ իս պախի, մարդ գէշ խեծնի, էրթայ խզմթ: Ըսաց.— Որ անցկուն ի, ըսաց, ձի եօթ նախիր թողիր սարի մէջ, կինա մէջ նախրին, մէկ քի խամա առ, պիւ.

էն էլ կանգնաւ, զղամաքեարբանդ առից, կինաց. կինաց մէնջ սարին տեսաւ նախիր, բիրադի գետջ ցանդեղն ի, էն էլ մեանչ նախրին կան էկաւ կան էկաւ տեսաւ մէկ բալաք ջրւան ի, մատ իւր մէր դեադրիր ի. Ասաց, կըլնը չըլնը, էս ջրւան ընձը պէտք ըլնը. էլաւ կինաց մօտ նախրոյին. Ասաց.— նախրոյի, էլի էսա ջրւան ինձը խամա պունի. Նախրոյին ասաց.— էս ջրւանին քիւն չի. Ըսաց.— Ապ վիր խամար ի. Ասաց.— Ռոստամու խամար ի, Զալու տղէն ի. Ասաց.— Տիւ գՌոստամ կ'ճանչնաս: Ասաց.— Զիմ ճանչնայ: Ասաց.— Ապա տիւ թնջ գիտիս էսա ջրւան էնու խամար ի. Ասաց.— Եիս, տեսայ, ասաց, մէկ ձի ծովուց տիւս էկաւ, էն ձին կինաց վեար էն մատակ ձիուն, տիր ըմ էլ մտաւ մեանչ ծովուն. մէկ ձէն մնէն իլաւ ծովուց, էսաց. «մէկ բալաք ջրւան ըմ կ'ըլնը մօտէն, Զալու տղէն Ռոստամ չ'ըլնը, թը մարդու չ'տէք»: Ասաց.— Որ ընցկուն ի, ձեռ էտու ուր ջէք, մէ կուց ոսկի քեաշխիշ էտու, ասաց, դէ. իլի ինձի խամար պունի. Ասաց.— Ընցկուն ի, տիւ Ռոստամն իս, կինա քիւ խամա պունի.

Ռոստամն էլ կինաց մօտիասացաւ, գքեամանդ եթայ պունից: Զին էլ էնքան փախաւ. էնի գվուքիր գարկից գետըն, չիւր ծնկներին մրտաւ գետըն, խող քեակից, ընցկուն ինչ գիւթան թալին խող ճղին, ընցկուն զխող կ'ճղի, չի կերի պունի: Մէ քեար կէր ճամբխի մէջ. ըզ ոքիր ետու քեարին, ասաց.— Եմ Աստուած, ինչ ասաց. «Եմ Աստուած», ձին դեադրաւ: Էլաւ գձին պունից, ձեռ ետու ձիու քեամկին, ըսաց.— Մհայ իմ ձին աղջկ ի, թի չի. Ան էլ ձին ջիւղկի աքուց ըմ էգարկ, կպաւ քեարին. Քեարի կտուրքիր կինաց:

Ռոստամ էլաւ, ըզձիու զլեռիս պագնից, գձին խեճաւ, իրի տուն: Մէկ ձիւր ըմ կէր, էկաւ խասաւ էն ձիւրի մէջ. մէ մարտ էնդէղէն կ'կեայ, տեսաւ ձիու նալիր, բըւռնիր գետջ խիտն ի. Ասաց.— Տիւ թնջ մարդ իս: Էսաց.— Եիս նալքանդ իմ, ձի կ'նալիմ, Էսաց.— Էրթանք տուն, իմ ձին նալի Էսաց.— Տիւ պայա էղի, եիս քիւ ձին նալիմ: Ասաց.— Եիս իմ ձին զօ-

րով իմ պռնի, էրթանք միր տուն, փախաւան կաչ, ֆէրիզ կաչ, իմ ձին պռնի, որ տաչ, տիւ նալիւ: Ասաց.— Ռոստամ, տիւ ձիուց իջի տակ, թի քիւ ձին փախաւ, երս տամ: Ռոստամն էլ համայ ըռըկաւ, ձիուց թռաւ տակ: Էն էլ ինչ էրաւ. ձեռ էթալ ձիու չուրս վուտն էլ պըռնից, էպի զնալ ոսկի էգարկ, բըռ-քիր ալմաստ էգարկ: Ասաց.— Դըլի քիւ ձին խեծի: Ռոստամն էլ էլաւ զձին խեծաւ: Գանչց լսաց.— Ռոստամ, ինչ կեախ քիւ ձիու նալիր ընկնի, էն կեախ քիւ մըղադար կը թըմըմը: Ադ էլ դարձաւ, էսաց.— Նալրանդ, քիւ նալիր խան տար, էրթանք միր տուն, քիւ հախն էլ կ'տամ: Էն էլ ասաց.— Քիւ խօր վարիաթ ծախսի, իմ բըրըռի գին չի խանի: Ու տեսաւ, իրիշից, նալրանդ պըծաւ:

Էլաւ մաղղէն էրաւ, ձին խեծաւ, էկաւ տուն:

Ջալ էլաւ իրիշից, լաճ կ'կեաչ, համայ, մաղղէն էրուկ իւ Ըսաց.— Էդ ինչ եղիր քիւ, տիւ մաղղէն էրիր իս: Ասաց.— մէկ մարտ իմ ձին նալից, ասաց.— «ինչ կեախ էս նալիր թափը, քիւ մըղադար կ'կեաչ: Ջալ էլաւ ձիու վուտ վիրուց, զնալ աչկից, ասաց.— Ռոստամ, էն մարտ չիւր իւ: Ասաց.— էն մարտ կուրսաւ զի վերայ: Ասաց.— Որ անցկուն ի, ասաց, քիւ օմը էրկէն ի, տի յերեկնանայ, ասաց, էնիկ հրիշտակ ի քիւ ձին նալի, էսի մարտի նալ չի:

Ջալ ուրախացաւ. կինաց սանդուղ իպի, զգուռ ջաւահիր ակնունք կախից լաճու մօտէն, զրեխէն շապիկ խակիցուց, զճակիր կապից լաճու մէջքէն, զթուր կապից լաճու մէջքէն, զխանջար էգար լաճու մէջք, լաճ զարտարից. շատ ուրախացաւ Յրեողկից կանչից զսաչխաքիրուն, զձին տիւս քեշիցին, պիրին գձին թիմրիցին, զսաղաֆը զին տրին մէջք, ըզ ալտուզնամայ ռըքեք կախից մօտէն:

Ռոստամ խեծաւ զձին, ձեռ էթալ դեախ զիւր գետրզ, վիրուց, զիւրզ քեառսուն խոնդքեար ի, զիւրզ վիրուց խտիր չիւջիւ ուր, ըսաց. ըսաց.— Ջալ, ըսաց, ձի ձը էրկիր տը չրեողկիս:

Ըսաց.— Մի թագաւուր փախիր ի. կեացիր ի սարի մէջ մէկ տուն շինիր, մտիր մեանչ էն տան, տիւռ շինի, էսա եօթ տարի կաչ, տիւս չիկի: Տիւն էլ կինա լանդեղ զիմաց թագաւուրին դեադրի. թագաւուր քի կ'ըսը նստի: Ասա, «իմ խէր ձը չ'ասիր նստի»: Էն թագաւորն էլ կ'ասի, քիւ խէր քի ինչ ըսիր իւ: Ասա իմ խէր ձի սսիր ի.— Թիւրանայ թագաւուր իկիր մե էրկիր բիրադի զաւթիր ի, կ'չրեողկի մատ իմ խէր, «էրի զի բեարի»: Իմ խէր չ'էրթայ թագաւուրի մօտ, իմ խէր տամահքեար չի ուր մալին, կ'ըսը Աստծու սաղաղէն Ջալու գլխուն, Ղարամանի գլխուն, Սամի գլխուն, Ղաթարանի գլխուն, ընցկուն խըզինայ զափինայ խուրած ի, չիւր Քրիստուս կեաչ դեատաս-

տան մեզի խերիք իւ Էնիկ տամահութիւն չ'էնի իւր մալ չաքով էր-
թայ մօտ. Էնիկ իւր մօտէն կ'վախենայ, Էնու գլեղիս զարկի, չիւրիշ-
մարտ տինի տեղ: Տրսւերկու քեաղաք էլ մնացած իմ խօր ձեռք, չի
կեացիր Թագաւորի մօտ: Եիս ասօր բալա քեզի կիրիմ մէկ կուշում
առնիմ, էրթամ Էնու կռիւ. մարտ մէկ պղինձ կաթ կթի, Էնու մէրան
չ'լցի մէջ, չ'ընը մածուն. մկայ մինք անխովիւ օյխար ինք, որ տիւ
կեաս խասնիս էստեղ, եիս կարողութիւն ունիմ, էրթամ խատ էն
մարտիւն կռիւ: Թի մինք կուտրուանք, տը կիրին վեար մէկ թուխտը,
ժամանակով մէկ մաշկով մարտու տը կասայ Էնին. թի մինք զա-
նունք մե տեղաց խանիցինք, էն չիտց քեան զըմէն աղէկ ի. Թի
կ'խարցնի, իրն ի մնացի քիւ խօր ձեռ. ասա, Զարլ, Քարլ, Սիսան,
Շէհրուզ, Նաւրուզ, Լահուր, Ղանդաշար, Ալա, Բաղդա, Էսկիազ քեա-
ղաք իմ խօր ձեռն ի:

Քեաւղըբաթ Թագաւոր էրազ ըմ տեսաւ. տեսաւ մէկ մարտ գիշե-
րուան մէջ սինիմ լիք ոսկի լցրիր էր, մէկ ակնունք էլ տրիր ի վեար էն
ոսկուն. իպի տի չիւջիւ Թագաւորին.

Թագաւորն էլ էլաւ, ուր մարտիրուն կասայ էրսու. — Ասօր մե
Զալի տնէն աղէկ խօսք ըմ տը կեայ մե խամար:

Էլան շատ ուրախացան. էլան ուրինց ձիանք տիւս քեշիցին,
խեծան, կեացին խամ կան կեալու.

Մնաց չուր կէսօրին:

Էնունց մէկ ղուրուղչի կայ, զգիւրբին տրիր ի աչից, զճամբըխնիր
Թամաշայ կէնի, մարդ չ'կեայ:

Իրիշից տեսաւ, մէկ մարտ իրի:

Ասաց. — Թագաւոր, մէկ մարտ իրի, եիս չիմ գիտի, ինչ մարտ ի:

Ասաց. Աղէկ Թամաշայ էրա, թ'ինչ մարտ ի:

Ասաց. — Թագաւոր, էսաց, Էնու ճակիր ամեն Զալուն ի, Էնու
գիւրգն էլ Զալուն ի. Էնու զրեխէն շապիկն էլ Զալուն ի, ամա էն
ձին, էն փալիւան չի Զալուն:

Ասաց. — Որ անցկուն ի, ասաց. Թիւրանայ Թագաւոր զէնու
քեաղաքն էլ առիր ի, Էնունց փալաւան ի, Զալու ճակիր, գեորզ,
զրեխէ շապիկ, զըմէն խակիր, իկիր ի իստեղ:

Թագաւոր էլաւ զձին խեծաւ, փախաւ:

Ռոստամն էլ լարից չիտիւ, չիւր էնունք խասան ուրինց տուն:
Ռոստամն էլ խասաւ, տիւռ չ'կեարցան փակի, մտաւ նիրս: Էնունք
չ'ին գիտը, թի Ռոստամն ի.

Թագաւոր ասաց. — Նստի:

Ասաց. — Իմ խէր ձի չ'ըսիր նստի:

Ասաց.—Ապա քիտ խէր Բնչ ասիր ի:

Ասաց.—Իմ խէր ձի ասիր ի, Թիւրանայ Թագաւոր իկիր մե
էրկիր բիրադի զաւթիր ի... *)

Թագաւորն էլ էլաւ, ուր Թագարիք տեսաւ, խինգ խարիր մարդ
առից գնաց:

Թիւրանայ Թագաւորն էլ քիմացաւ, թէ Զալին մէկ տղայ եղիր,
անուն էլ Ռոստամ ի, չրեղկիրի մօտ էնու Թագաւոր, կեայ խատ
էնու կռնէ էնի:

Էնու մէկ փալաւան կէր, անուն Ղէյլուն. էլաւ տասւերկու խա-
զար մարտ էտու, ասաց — Կինա, էնու ճամբախ պունի, ինչ կ'կեան
զմարտիր բիրադի սպանիս, զԹագաւոր, զՌոստամ պունիս, պիրիս ձի
խամա, հմայ Բնչ մարդ ի Ռոստամ:

Ռոստամ ուր Թագաւորով կ'կեան կ'տեսնան էնքան չադր ի
զարկած վեար ճամբխին, քանց աստղ չերկնուց:

Ռոստամն էլ գնաց վեար չադրին ջուր խմաւ. էկաւ, տեսաւ
Թագաւոր սիլախ կապիր ի վեար ուր, տ'երթայ: Ասաց.— Թագաւոր,
ասաց, եիս տըսիր իմ, մի՞մ մարտ կռիւ տը չերթայ:

Թագաւոր, էսաց.— Կ'տեսնանս էսքիպալ ասքեար վեար ճամբխին
նստիր ի:

Ռոստամ ասաց.— Թագաւոր, տիւ նստի էստեղ, ասաց, եիս
էրթամ էնիւ կռիւ. թի տիւ տեսար իմ գեորդի ձէն անիւշ էկաւ,
տիւ էլ իրի խասի ձի, զեարկինք, թի տիւ տեսար իմ դիւրդի ձէն
չ'էկաւ, տիւ էլ փախի, մտի բիրդ ինի, չուր չաւրտընից չաւրտեան:

Ռոստամն էլ կանգնաւ. կանգնաւ զիւր ճակիր կքից. Ռոստամ ընցկուն
լցուաւ, էնուր մազիր զրեխէ շապիկն իտու տիւս, Բեռուաց, կանչից:

Էնու փալիւան էկաւ քիւջիւ անուր. զեարկիցին գիւրդիր մէ մէկու.
էնքան գեորդ կգեարկին մէ մէկու, մէկ ըսաց. «ախշարք աւրաւ էնունց
գիւրդը ձէնըրուց». մէկ ըսաց, «չէ. էրկու փալէան ընկեամ մէջդան,
կռիւ կ'էնին»:

Չուր քիւրկուն զեարկեցին քիւրարու:

Ռոստամ ըռըկաւ անուն Աստծու իտու, ըսաց. էս մէկ մարտ
ի, որ տա եիս չ'սպանիմ, եիս Բնչըխ էս կուշում տը ջեարտիմ էն
էլ գիւրդ մ' էզարկ, ձիուց իպի տակ. Խասաւ զչախուն էթալ վիզ
կտրից:

Թագաւոր ուրախացաւ, սազիր ետու զեարկիլ, էրկու կուշում

*) Ռոստամը կրկնում է իւր հօր պատուէրը. տես եր. 207—208

խառնուան ցիրուր, զիրար ջեարտիցին. իրիք օր իրիք գիշեր ցիրար ջեարտիցին. մնաց թագաւոր. Ռոստամ իրիք մարդ, երկու մարտ էլ էն մէկ էլ եանէն մնաց, Ռոստամ իպի ինչ էրաւ. իպի զատամքիր քեաշից, էգար էնու ճակատ, ըսաց. — Կինա, քիւ թագաւորուն ասա, թըլս իւր թիղարիք տեսնայ, կեայ կուիւ:

Թիւրանայ թագաւոր իւր խզմաթ քեարին ըսաց. — Իլի, կինա իրի շի, ընչի մե մարտիր չէկան: Եկաւ իրիշից, գեոյ մարդ տիւռ դեադրիր ի, Կանչից, տարաւ տիմաց թագաւորին: Ասաց. — Ատ ինչ էղիր քի, Ըսաց. — Ռոստամ ընցկնայ էրաւ խա մեզի, ասաց, քիւ թագաւորին ասա, թեադարիք տրսնայ, կեայ կուիւ:

Ռոստամու թագաւորն էլ կինաց մա Զալ, Էլան կանգնան, ուրանց խիւաթ է շանգառի առին, էկան, տիմաց դոշունին էգարկ. մընաց, իպի թուղթ ըմ էլ կիրից, ցեոդկից Զաբլ, Քաբլ, Սիսան, Ձէհ-րուզ, Նաւրուզ, Լահար, Ղանդահար, Աւլա, Բաղդա, Էնունք էլ կանգնան, ուրինց դուշում առին, էկան:

Ռոստամն էլ իր մարտիր, իր նալիւքիր չի ճիւկի ցիրարուց, Մէկ թաբիւր էկաւ տէմաց, Ռոստամ էսաց. — Զալ, էգ ինչ թաբիւր ի, Ըսաց. — Միրաք է Քաբլի:

Էն թաբիւր ընցաւ, մէկ էլ էկաւ. ասաց. — Զալ, նա վիր թաբիւրն ի:

Ըսաց. — Զանգ է Ջահուր ի:

Էն ընցաւ մէկ էլ էկաւ, էսաց. — Զալ, նա վիր թաբիւրն ի:

Ըսաց. — Գուրգին ի Գուշայ ի:

Էն թաբիւր ընցաւ, մէկ էլ էկաւ, Ըսաց. — Զալ, նա վիր թաբիւրն ի:

Ըսաց. — Տիւսէ Նազար ի:

Էն թաբիւր ընցաւ, մէկ էլ էկաւ, Ըսաց. — Զալ, էս վիր թաբիւրն ի:

Ըսաց. — Մեյլադի Սիսան ի:

Էն թաբիւր ընցաւ, մէկ էլ էկաւ, Ըսաց. — Զալ էս վիր թաբիւրն ի:

Ըսաց. — Աւլա ի, Բաղդա ի:

Եկան, ասքեար Ռոստամու չադրի մօտ տրին. Տըւերկու խէյլաթ զափուշքիր ի. Ռոստամու ասքեար ինչքան ի, էն մէկ էլ սիւ իզն ի. Ռոստամու ասքեար ճակատն ի:

Ասաց. — Զալ, ըսաց, մինք ինչլս կուիւ տ'էնինք էնու խիտ:

Ասաց.—Մը վախենայ, ասաց, մէկ մէկ տի կռիւ էնին. եիս ու մուդ ունիմ Աստծուց, իմ մէկ մարտ էնու թաքիւրի բարայ իւ

Մնաց. ուրից թաղարիք տեսան, տեսան, ինչ կ'իրիշին. մէկ մարտ էն եանէն էկաւ, ըսաց.— է՛, թրխ Միրաբէ Քաբըլի կեայ խատ զի կռիւ էնինք:

Միրաբէ Քաբըլի կանգնաւ, ուր սիլախ կապից, զիւր գետրգ վիրուց, զիւր ձին խեծաւ, քշից մէյդընի մէջ:

Երկու զեարկեցին իրարու. ըսկուն կ'զեարկին իրարու, էլ էնունց դարբ չ'մնաց չըռջիւ զեարգին, բիրադի կուտրուաւ, չմնաց, էնունց արուն ձիու ոտաց խիտ գնաց:

Կռիւ էրին չուր չիրկուն:

Միրաբէ Քաբըլի կանգնաւ մէկ գետրգ էզար փալաւանին, փալաւան ձիուց իպի տակ. Խասաւ, զթուր քեշից, զգլեոխ կտրից, առից էկաւ:

Զալ ըսաց.— չու, մէ խալաթ ըմ պիրէք տուէք Միրաբէ Քաբըլին, աղէկ փալաւան իւ

Մէկ խալաթ մ' տուին Միրաբէ Քաբըլին:

Մնաց փալաւան մ' էկաւ մէյդընի մէջ, բեռուաց, կանչից, ըսաց.— է՛ Գուրգինի Գուշայ խատ տը կիմ կռիւ:

Գուրգինի Գուշա կանգնաւ, ուր սիլախ առից, գնաց մէջ մէյդընին, երկուս զարկըցին չիրարու. Մէկ ասաց.— «աշխարհ տաւրայ էնունց ձէնից».— մէկն էլ ասաց. «չէ էրկու փալաւան ին, մաջ մէյդընին կ'կռուին»:

Զում չըրկուն իրարու խիտ կռիւ էրին:

Գորգին կանգնաւ, մէ գետրգ էզար, էն փալաւան ձիուց իպի տակ, թուրն էթիլ գլեոխ կտրից, առից իպի:

Կանչից Զալ, էսաց.— է՛, մէ խալաթ ըմ պիրէք Գորգինի խմար. Ռոստամ ըսաց.— Զալ, Լսունց մէկ մէկ կռիւ. մինք մնացինք մէջ չուր ղըյամաթին:

Ըսաց.— Ռոստամ, էնոնք տի մէկ մէկ կռուին:

Ռոստամ գ'ասի.— Մարտ ձի չը ճանաչը, զի կանչը, էրթամ կռիւ:

Ըսաց.— Քի էլ տը կանչին:

Մէկ էկաւ կանչից. «Զանգէ չէշաուրի թըղ կեայ կռիւ»:

Զանգի չէշաուրի կանգընաւ, ուր թէղաբէք տեսաւ, ուր սիլախ առից, ուր գետրգ առից, կինաց կռիւ:

Երկուս կռուան չում կէսօրին:

Եզար. Զանգէ չէշաուրի գլեոխ կտրիցին, տարան:

Ռոստամ էլ կազնաւ, զիւր սիլախ առից. կանչից սաչիսին, զիւր

ձին տիւս էխան՝ զըռելսէ բալաք: Թիմար էտու ձիուն. էլաւ զսա-
ղաֆէ զին իտի քեամակ, էլաւ զիւր թուր կապից ուր մէջք. էլաւ
ձեռ էթալ դեմախ գեորզն, էնու գեորզ էլ իրիք խարիր խոնդքեար էր:

Էլաւ զձին խեծաւ, ըսաց. — Զալ, Թիւրանայ թագաւոր ճի ի.
Ըսաց. — քեառասուն թաբիւր ասքեարի մէջ նստուկ ի, տիւ
յըս ճանչնայ:

Զալ ըսաց. «վալախ իմ տղէն վախացաւ».

Գնաց մօտ էնունց թագաւոր: Զալ էլ չիտիւ կինաց, Իրանայ
Քեաւղըրթ թագաւոր էլ չիտիւ կինաց, էնունց փալաւաննիր բիրադի
կանգնան, կինացին:

Էնունց Թիւրանայ թագաւոր մտովէն կէն էրկրպագութիւն
էնին. Ռոստամ էլ մօտացաւ, մէկ գեորզ մ' էգար:

Սադիր գարկըցին, թրիր քեշըցին, էրկու թագաւոր առան չի-
րուր, էնքան մարտ չիրարուց ջեարտիցին, էրուն էղաւ գիտ զջան-
դաքտիր տարաւ՝ իրիք օր իրիք գիշիր զիրարու զեարկըցին: Թիւրա-
նայ թագաւոր կուտրաւ, փախաւ, կինաց խասաւ իւր սընոր, իւր
քաղքընէք. ճիւր ըմ կայ մէջ. Աւա-Ջահգաւութ կ'ըսին, էնտէ զէն
ճիւր ընցաւ:

Ռոստամ էլ չիտ դարձաւ, էկաւ տուն. նստաւ, կերաւ, ուր
մրազ խասաւ:

Բ.

Ռոստամ էլաւ ուր խօր մօռէն ըւրկաւ, կինաց չիւրուշ աշխարհ
մտաւ, կինաց մէկ մարտու տեռա դեադրաւ, տեսաւ մէկ մարտ էլաւ
տիւս ուր տնէն: Էլաւ չիւրիշքից, լին տեսաւ. տեսաւ մէկ մարդ վեար
մէկ սարի դեադրիր ի:

Էլաւ կանչից, ուր խօր. ասաց. — Էլի մէկ մարդ կայ, Լստեդ:
Իրիշկի նա լին մարտ ի:

Էլաւ խէր էկաւ իրիշից, տեսաւ էն մարտ խեծուկ ի, սար չի,
էնքան կանչից, էնու պատասխան չ'էտու. լեզուն փակուիր էր, էնու
վուտքիր էնքան պաղիր էր, զանգիւց տիւս չէր ի կեայ: Էն էլ էկաւ
պղինձ ըմ տաք ճիւր իլից վեար զանգիւն. վուքիր տիւս էկան,
ԶՌոստամ տարաւ կոնադ:

Քանի մ' օր մնաց էնու տուն. Իրիշից տեսաւ, Ռոստամ էնքան
կոչադ մարտ ի, ուր ախչիկ էտու էնու (չին գիտը, թէ Ռոստամն ի
թէ չէ կ'սպանին):

Մէկ ժամանակ ըմ անցաւ, չիմացան որ Ռոստամն ի:

Մէկ օր Ռոստամ միտք էրաւ, ըսաց. — Եիս Զալու տղէն ըլիմ,

Իրանայ երկիր իմ ձեռն ի, եհս ասօր թողիր իմ, իկիր իմ մէկ կնիկ չարեհով:
 Էլաւ ուր կնկան ըսաց. — եհս պտի էրթամ իմ խօր աշխարք.
 իմ խօր անուն Զաւ ի եհս լէ Ռոստամն իմ, առ իմ բազբանդ. քըզի,
 թը զի մէկ լաճ էլաւ, էս բազբանդ կապիս էնու թիւրն, ըսիս. «տիւ
 Ռոստամու տղէն իս, Ռոստամն էլ Զաւու տղէն ի», թորկիս կեայ մի
 երկիր:

Էլաւ Ռոստամ էկաւ ուր խօր մօտ:

Լաճ էղաւ մօտէն. լաճ միճացաւ: Լաճն էլ ինչ կէնի. կերթայ
 Հեոլ կիսաղայ, որ ունչ կ'գրեակի, էնու թիւ կ'կուտու, վիզ կ'թուցի:
 Էլան կինացին վորայ կեանգեատ: Տղայ անունն էլ Զորաբ ի, էլաւ
 թագաւոր պունից տարաւ. պունից տարաւ, տեսաւ շատ տեսակով տղայ
 էր, տղին պեան չ'էրաւ. էրաւ ուր խզմաթ. քեար:

Մ'նաց մէ Ժամանակ մա թագաւոր, թագաւոր իպի կարքից, Է-
 նիկ Զորաբ շատ զօրբայ փալաւան էլաւ: Թագաւոր ըսաց. — Կինա
 զՌոստամու քեաղքընիր աւրէ, Իպի քսան խազար ասքեար խտու
 էդ էլ էկաւ ուր տուն, որ կնկանըմէն իզին ուզի, էրթայ զուշուն.
 Կնիկ էսաց. — բա մե հալ ինչ տ'եղնի, տիւ կ'երթաս:

Արծկից զբազբեանդ էտու, ըսաց. — եհս տ'երթամ իմ խօր երկիր.
 ալ եհս չիմ տեսունայ, ըսաց, թէ քի մէկ ախչիկ էլաւ, էս բազ-
 մեանդ ծախի, կի, թէ լաճ մ' էլաւ, էս բազբանդ կապի էնու թիւրն,
 թըղ կեայ Իրանայ երկիր:

Զորաբ առից ուր կուշում կինաց, էզար Իրանայ քեաղքընիր
 աւրից: Զըհար տարան Ռոստամու խամար. «տիւ իմանաս Թիւրանայ
 մէ փալաւան էկիր ի, մե երկիր քեանդից, տարաւ»:

Ռոստամ էլաւ զիւր թեաղըրիք տեսաւ. զիւր սիւահ կապից, է-
 յաւ զրեխէ շապիկ խակեաւ, կանչից, սալիսքիր էկան, զձին տիւս քեա-
 շիցին. սաղաֆէ զին տրին քեամակ, էլաւ ալզուզլամոս ռըբեր կախից
 մօտէն, էլաւ զձին խեծաւ, ձեռ եզար զգեորզ վիրուց, քէշից, ըսաց.
 «եա Աստուած, էրթալ իմ ձեռն ի, կեալ քիւ ձեռն ի»:

Կինաց կանգնից տէմաց Զորաբին, չէշունց էտու, էսաց. — Տիւ
 իմացիր իս եհս մեռիւր իմ, տիւ կեաս Իրանայ թալան քի խամար տանիս.
 Զորաբ ըսաց. — Տիւ մեռուկ իս, պա ինչ իս, ըսաց:

Ռոստամն էլ ըռըկաւ, էնկեախէն գեորզ մ'էզար. Զորաբ զիւր
 մարտալ էտու չէռջիւ գեորզին. Զորաբն էլ էն կեախէն մէ գեորզ
 էզար Ռոստամուն: Ռոստամ էլ մարտալ էտու չիռջիւ. զՌոստամու
 մարտալ կուտրից:

Ռոստամ էսաց. — Մինք գեորզով կուշինք, էս մարտ զի տ'սպանը:

Ելան պայա էլան, գիւլաշ կպան. Զորաբ զՌոստամ վիրուց, էզար գետըն:

Ռոստամ ըսաց.—Նսօր տիւ քիւա էրիր. խլիսուն եիս տիւ տը գիւլաշ կպնինք:

Խլիսուն էկան գիւլաշ կպան, էլի զՌոստամ էտը գետըն. իրիք հեղ զՌոստամ կոխից: Ռոստամ էլ վուտ էտու, գէնու շուռ էտու, խանջալ էթալ, զփուր ճղից:

Ըսաց.—Յէ, ըսաց, տիւ զը սպանըցիր, տիւ իմ խօր ձեռէն դիւր պըճնիս:

Ըսաց.—Եանի քիւ խէր ձվ ի, եիս քիւ խօր մօտէն վնախանամ:

Ըսաց.—Իմ խէր Ռոստամն ի, Զալու տղէն ի:

Ասաց.—Յը, ըսաց, յեհրի քեռ բազբանդ: Ըսաց.—Իմ բազբանդ տուիր իմ իմ կնկան:

Մեռաւ. Խէրն էլ զտղան ետը վեար իր զըլսուն, իրիք տարը աշխար պտըտից. մարտ չ կ'ըլիշը ըսը. «պի, տղէդ խուրի», ինչ մարտ ասը, կ'գետրկը, կ'սպանը:

Կ'մնայ, մէ պառաւ կ'ըլնի. պառաւ կ'երթայ Զալուն կ'ասի. «Բնչ տաս ձի, որ Ռոստամ ուր տղէն խուրի»:

Կ'ասի.—Պառաւ, տիւ քեանի փարայ կ'ուզիս, տը տամ քըզի:

Էն էլ կ'երթայ մէ կանէ կտուր կ'առնը, մէ գլետիս սապուն, կ'երթայ կ'նստը ճկուռ պերան. սապուն կ'տայ մեանչ ճրիւն, զկոն կ'վլայ, Ռոստամ էն եանէն կ'կեայ, կ'երիշի, տեսնը մէ պառաւ զկոն կտուր կ'վլայ, Ըսաց.—Պառաւ ադ վլաս, Բնչ էնիս էդ կոնու կտուր:

Ըսաց.—Եիս ընիմ լաչիկ, քէշիմ վեար իմ զլսուն:

Ըսաց.—Ընչու, տիւք ծուռ իք, կոնը կտուր կ'ըլը լաչիկ:

Ըսաց.—Որ անցկունի, մեռել կ'Ժրփ, որ տիւ տրիր իմ քեռ զլսուն, կան կ'կեաս աշխարք:

Ռոստամն էլ էդ խաբրով իպի տղէն խտի գետըն, խուրից, Զիւր էն չախ Ռոստամ ծուռ էր, էն չախից եիտ խելօքցաւ, Կինաց տուն, ուրախացաւ:

Զորաբին էլ մէ տղայ մ'էլաւ, անուն տրին Բրզոց: Բրզոց էլ մի-ծացաւ, էլաւ ուր խամար ցանք, վեար կ'էնի, ուր ապրուստ կ'էնի:

Թիւրանայ Թագաւուր Ալֆասիա-Ջաբա Ֆիշա կ'ըսին, զիւր վէզիր կանչից, զիւր փալաւանքտիր կանչից, տ'երթայ ուր սէյրանջի խմար սէյր էնիլիւ: Ելան, կենացին. տաս խապար աւքեար առից կինաց. տեսաւ Բրզոց էլ ուր խամար արտ ցանիր ի, ուր խամար ճիւր կ'էնի, էնու փալաւանքտիր խապան մեանչ էն արտին մէջ վեր կ'երթան:

Բրդոն կանչից ըսաց. — Ընչո՞ւ. կ'տաս մեայ իմ արտին կ'երթաս: Ըսաց. — Ասօր թագաւոր տ'երթայ սէջրանջի, ըսաց, մէկ խաշք վնար օտաց չըն թորկի:

Ըսաց. — Վալահ ինչ մարտ մեայ իմ արտին կեայ, տը զեարկիմ, սպանիմ:

Մէ փալաւան քշից մեանչ արտին: Էն էլ էնդեխէն խասաւ, մէ պեախ եղար, զփալաւան շուռ էտու: Զըմ կինայ յերկնացրցի, խինդ փալաւան պեախով սպանից: Էդունք էլ էկան մօտըցան, թօփ էլան պիւլիւր, զերգօ պունիցին, առին, տարան տէմաց թագաւորին:

Թագաւոր ըսաց. — Զըման, էս մարտու խիտ տ'ինչ էնինք:

Ասաց — Պի սպանինք, Զալու ճեռն ի, էն վնար միճացաւ, մեզնէ շատ մարտ տը ջեարտը:

Թագաւոր էնու խօսքին չ'իրիշկից: Թագաւոր ըսաւ. — Փիրան, ինչ էնինք խրտ աս մարտուն:

Ըսաց. — Զը տը խարցում չ'էնէր զինի, օր տա զէնի խարցումս էրիր, պի տասներկու խազար ասքեար տու: Էն մարտուն, էն մարտ չրեողկինք էնու խօր աշխարք, թէ էնիկ էնեան սպանուաւ, էնունք ուրանց տղէն կ'սպանին, ուրինց քէֆն ի, մըղի վնաս չ'առնը, թէ քեաղաք մ'երկու մըղի զաւթից, շատ բաւական ի մի խամար:

Ասաց. — Է՛, մէ խալաղաթ ըմ պիրէք Փիրանի խամար, լաւ խիւքնով վեզիր ի:

Էպի սիլախ էտու, խակէստ խակիցուց, էպի մէ ձի էտու, իպի մէ գեորդ էնու խամար ետու շինել, իրիք խարիր խոնդքեար ի, իպի զերգոյ տասներկու խազար կուշում թասլիմ էրաւ: Բրդոյ էլ առից զկուշում, առից գընաց Իրանայ տեղ: Էլաւ գիրանայ տեղ թալինց, մալ էպի, ոչխար էպի:

Ջուաք Ռոստամու խամար կինաց. — Տիւ իմանաս, մէ փալաւան Թիւրանայ երկրէն էկիր ի, Իրանայ երկիր աւրից:

Ռոստամ էլ կանգնաւ, զիւր ասքեար առից, կինաց. կինաց տէմաց էնու նստաւ:

Ռոստամ զիւր ձին խեճաւ, էզաւ դարաւիւ, կ'պտըտայ: Բրդոյ էլ կաչաղ էլաւ, էկաւ դարաւիւ ռաստ էկաւ: Էրկուս կռուան, զեարկիցին չիրարու: Ինչ Բրդոյ գիւրդ մ'էզար, զՌոստամու մարտալ կուտրից:

Ըսաց. — Մէ Զորաք իմ մարտալ կուտրից, մէկ էլ իսա իմ մարտալ կուտրից, կայ չ'կայ էսի մըղի ազգ ի:

Էրիշից տեսաւ, ինչ տեսաւ, տեսաւ Զորաբու շիքիլաթն ի, Զորաբու աչքն ի, Զորաբու բոյն ի, էնու սերտ էնու վերայ եռաց: Էլ էնու թիւ չ'վերցաւ սպանիլու դարբ զեարկէր, Բրդոյ էլ մէ գեորդ

մ'էզար, էնու թիւ կուտրից, էն էլ փախաւ: Բրզոյ կանչից, ըսաց. — Յասօր կինա, խիստուն արի, քիւ խոկին անկիրող տ'առնիմ:

Ռոստամ կինաց ուր տուն եարալու նստաւ. կանչից Ֆէրամազ, իպի Ասաց. — Ըլի, ըսաց, իմ սիլախ առ, իմ ձին խեծի, իմ գետրդ առ, կինա փախաւանը խիտ կռիւ. էն ինչ իմ աչք ընկաւ էն փախաւան տեսաւ, իմ սերտ վերայ զղջաց, իմ էրուն եռաց. էնու շէքիլ, էնու աչքիւր, էնու բեաժ կ'նմանէր Ջորաբ, էն տէմով եիս ասը զան մարտ պռնիմ: մէ գետրդ մ'էզար, զիմ թիւ կուտրից, զը եարալու էրաւ: Էլի կինա խիտ էն մարտուն կռիւ, քեանի կիրիս էն մարտ պռնիս, ձը խամար սիրիս, թէ չ'կարցար, մէ դարբ ըմ գ'ր, սպանը, վով կ'լլը, թըխ ըլը:

Եկաւ զխօր շուրիւր խակեաւ, զխօր սիլախ կապից, զխօր ձին խեծաւ, զխօր գետրդն առից, էլաւ, էկաւ խա Բրզոն կռիւ:

Բրզոն իրիշից, ըսաց. — Քաֆր, ըսաց, յերկը շուրիւրն ի, յերկը սիլախն ի, յերկը ձին ի, յերկը գիւրդն ի, փախաւան յերեկըն չի ըսաց. — Յիս եկիր իմ քիւ խոկին անկիրող տ'առնիմ, եիս յերկը մախն իմ, ամաց տիւ զըս չըս ճանչաց:

Էրկուան էլ մէկ շէքիլ ին. էլ մալտ իրարուց չ'ճանչցաւ, թէ որ խրօխպէնն ի, որ տղէն Լը, որ կռուան: Զեարկին իրարու, էնունց գետրդը ձէն ինկաւ աշխարբ. մարտ կէր կ'ըսէր. «աշխարբ աւրաւ», մարտ կէր կ'ըսէր ամպրուց ձէն Լղաւ», մարտ կէր «մը վախընաբ, էրկու փախաւան ին, մէջընը մէջ կ'կռուին»:

Բրզոն Ֆարամազ չի ճանչնան, կ'գեարկին յիրարու: Զատ անախուն գեարկիցին իրարու. Բրզոն վիար ուր գեանգիւն կանգնաւ, մէկ գիւրդ էզարկ Ֆէրամազին: Ֆերամազ զմարտալ քէշից, ետու յէւջիւ էնուր գիւրդին, զմարտալ կ'ուտրից, ասաց. — վալայ, էսաց, Լս փախաւան ձի տը սպանը:

Էն էլ էնու քեամկը եանէն զըվրից, զամաքեարբանդ եթալ, պռնից. փախաւանքիւր խասան, պռնիցին, աւին պիրին. ասքեարն Լլ էթող փախաւ կինաց ասաւ. «կ'սպանին ուրինց քէֆն ի»:

Սուից իպի տարաւ մօ Ռոստամ:

Ռոստամ ասաց. — Չ'պիրէք տիմաց իմ աչիչ, ես ըլնիմ, էնու խոկին անկիրող տ'առնիմ, տարէք թալըքէք զնդտն վէ, ասաց, չոր իմ թիւ Ժրի, եիս էրթամ, էն ինչ մարտ ի:

Ջհաբ կինաց մօր. — Քիւ լաճ պռնաճ ի:

Էնու մէր Թիւրանայ էրկըն կ'կեայ մա լաճ, կ'իրիշի, կ'ըլսը, մէկ կնիկ էնու լաճին կերակուկ կ'տանը:

Կնկան ասաց. — Իմ լաճ թըղնիս, տ'ւ ինչ ուղիս, եիս չի տամ:

Ասաց. — Թի քիւ լաճ ըզձիկ ուր խամար կ'տանը, եիս քիւ լաճ կ'թորկիմ, յիսոյ կինա գէն վի մեռնի:

Ասաց. — Եիս իմ լաճուն խարցնիմ:

Էլաւ կինաց Բրզօն, ասաց. — Բրզոյ, եիս դարավաշին կ'ասիմ իմ լաճ թորկի, կ'ասի քիւ լաճ ըզձը ուր խամար կ'տանը, եիս կ'թորկիմ, յիսոյ կինա զնդան վէ, չուր մեռնի:

Ըսաց — Մարէ, կինա ասա, էնիկ ըզձը թորկը, էնի փրթիճիւ շիրիկ ի չիւր ի դիամաթին:

Կինաց. Իպի գԲրզօ էթող, Ձին Բրզօն խեծաւ ու Բրզոյ՝ մէր, դարավաշ խեծան, փախան:

Էն օրն էլ Ռոստամու թիւ ժրիր ի. Ռոստամ տ'երթաց պունաւուր տ'ըխը, ինչ մարտ ի. Էնիկ էս եանէն կ'երթէր, էնիկ էն եանէն կ'գէր, ճամբը մէջ մէ մը կը ռաստ էկան:

Ռոստամ կանչից. — Հացդի քեաֆր, տիւ կ'փախիս, քեդ խոկին կ'սրճուցիս, շատ աղէկ պեան ի, տիւ իմ կարավաշ վրէ՛ կ'տանիս. տիւ եղսիր Իրանաց տեղաց տանիս:

Էրկուս առին չիւրար, կռուան. դամաքեարբանդ թըլցին, գիրար պունըցին. ընցկուն գետրոգ կ'գեարկին մէ մէկու գլխու վերայ, ընցկուն ինչ տարբին զսամախոր էլսան էտի վեար սնդանին, էնու աշակերտքիր կ'տան յէռջիւ կռանի, էն կրակ ինչըլս կ'թլի, ըսկուն կրակ էնունց գլխից կ'թլի. Ձիւմ չիրկուն մնացին մէ մէկուց կախ. ինչ Ռոստամն էր, ուր տանն էր շախուի, ինչ Բրզօն էր, մեանչ զընդանին էր շախուի:

Ռոստամ գետրոգ ըմ էգար գԲրզօ ձիուց իպի տակ, զթուր քեշից գվիզ տը կտրէր:

Բրզօ մէր կանչից. — Ռոստամ, տիւ մէկ սպանիր իս, չ'էնիս էրկու:

Ըսաց. — Մաֆրանգ, վրէ՛, վով ի, տիւ աղանց կ'ասիս:

Ըսաց. — Տիւ զխէր սպանիցիր, զլաճն էլ կ'սպանիս:

Համա Բրզօ կանգնաւ, խանջար քեաշից, կինաց դեախ ուր մէր. ուր մէր տ'սպանէր:

Ըսաց. — Տիւ ընչո՛ւ շիւտ չ'ասըր, եիս զիմ պապիկ կեախ էր, տ'սպանէր:

Ասաց. — Քիւ պապիկ ինչ քիւ խէր սպանիր էր, եիս էն աբով քի չ'ասըր, որ տիւ գքիւ պապիկ սպանէր, քիւ խուր փուխ կ'խանէր. եիս տեսայ քիւ պապիկ գքի տ'սպանէր, չ'թորկիցի:

Ռոստամ էնքան ուրախացաւ. ձեռ էթալ զԲրզօ կիրկից, զգլեոխ պագնից, էնքան ճխտից, էնուր մօր կաթ մատքիր վէ խտու տիւս՝

Սուից, կինաց ուր տուն. կինաց Այվանէ Զաբըլ:

Վաթսուն փաղաւան կեացին պեարիւ Տիւար տնէն, վաթսուն փաղաւան էլ Գողարգը տնէն կեացին, թող զբաշիբուզուդ Թագաւոր չիմացաւ, թի Ռոստամ զճըրգո ճանչցիր ի, պիւրի ի, ըն էլ կինաց մէկ բազբանդ խրկից էնու հաղիայ:

Ռոստամ ասաց. — Ըստինա իրիք ամիս կ'նստիք իմ տուն, ուտէք, խմէք, ձեք բէֆ անէք, զմէկ փաղաւան քեան Բրգո գնդայ, ինչկիաս խիւնդար կայ, զրմէն իմ խամ ըլ'ը:

Ջհար կ'երթայ Թիւրանայ թագւորին — Տիւ չիմանաս, Բրգո չի սպանած, վաթսուն փաղաւան Տիւար տնէն կինացած էնու պեարիւ, վաթսուն էլ Գողարգի տնէն կինացած, թող զբաշիբուզու. էնու թագաւորն էլ մէկ բազբանդ էնու հաղիայ ի չրեողկի. Ռոստամն էլ ասիւր ի, ըստընայ իրիք ամիս էլ տը նստէք, ուտէք, խմէք, ձեք բէֆ անէք, եիս մէկ փաղաւան քան Բրգո գնդայ, ինչկիաս խիւնդար կայ, զրմէն իմ խամ ըլ'ը:

Թագաւոր մաղդէն կ'էնի. մէկ կնիկ կայ, էնու խամուսին ի, էկաւ տէմաց էնու: Խիտ չ'խուսաւ: Յիտ դարձաւ:

Տիր ըմ էլ էկաւ, ասաց. — Թագաւոր, վրէ խատ ճը չըս խուսը, ասաց, մէք քեան Ղարաման Ղաթլի սպանիցին, եիս էկի տիմաց քեզի, խատ զի խուսացիր, մէք քեան Ֆրիւղէ Քիւան սպանիցին, եիս էկի տիմաց քի, տիւ խուսացիր:

Ըսաց. — Ինչ Ղարաման սպանիցին, հման անիւշ կ'ենայ էնու տեղ. զՖրիւղէ Քիւան սպանիցին, Փիրան անիւշ կ'ենայ էնու տեղ, չասոր իմ դիւշման քան ձի կուլաղ ի, ես ճնչըխ տը խոսիմ խատ քի:

Պառաւ ասաց. — Հիմայ վեար ձի ըլ'նը, քի կըպը, պոնիմ պիւրիմ էստեղ, քի կըպը, կ'սպանիմ:

Ըսաց. — Որ տիւ էն պեան ընիս, եիս քի տ'էնիմ իմ օրթախ, քեանի տիւ Ժիր իս:

Ըսաց. — Դէ չրեողկի Ֆիլասըմ ձի խամար առ պի Զինմայինայ, էն էլ էրկու խարիր ոսկը ամսական էտու Ֆիլասըմըն:

Ասաց. — Յրեողկի, ըսաց, մէք սաղ ձի խամա պի, որ ձեռ տամ ինէ, խազար ձէն մօտէն ըլ'նը, մէք չադր էլ ձի խամար պի:

Թագաւոր իպի. Սիւսիւն — Ջհադիւ առից, կինաց. կինաց Իրանայ երկիր. կինաց մէկ չօլի մէկ չադր էզար, սէհրի էրաւ. սէհրի վեար Տիւսուն հասար էրաւ:

Ասաց. — Գոդեարզ, չասոր Իրանայ տեղ խաց ըմ կ'ուտին, իմ սաչիցն ի,

Ասաց, տիւ Տիւսն իս, վաթսուն փաղաւան քիւ տնէն կ'ըլ'նը, Իրանցին խաց ըմ կուտը, քիւ սաչից ը, ապա վրի սաչից տ'ըլ'նը:

Տիր ըմ Լ. ասաց. — Գողեարդ, չասօր Իրանայ տեղ խաց ըմ կ'ուտին, իմ սալիցն ի:

Ըսաց. — Տիւ Տիւս իս, կոնդ ու քիւս իս, ըսաց, չասօր Իրանցին խաց ըմ կ'ուտի, Աստու սալից Ռոստամու գրիտուն:

Յիտիւտ խանջար քեաշից էլաւ դեալս Գողեարդ, էլաւ դեալս Գողեարդ, յողից տիւս ինգեաւ Գողեարդը լաճ, Գիւ կասին, Գիւ ասաց. — Գողեարդ, Տիւս էն մարտիրոց չի, տիւ խաբար վեար էնուր տեարձիւցիս, կինս կանչի, թըլս կեայ նիրս:

Ըսաց. — Ի՛իս էն խաբրով չիմ պրզտկանայ, տիւս կոնդ ի, եիս կ'վեալսենամ իմ խաբար չ'էնի, եիս գիւր մարտիր կ'գեարկիմ, սպանիմ:

Գիւն էլ կինաց չիտիւ, մարտ ըմ էլ կինաց Տիւսու տնէն: Բա՜րամ (Գողարդու լաճն ի) կինաց, չըմ կերի շատ չերկնացըցի, վաթսուն փալաւան Տիւսու տնէն կեացին, վաթսուն փալաւան Գողարդը տնէն կինացին թող գրաշիբողուս:

Գինով մարդ ինչ չէշիդ ի, էն փալաւնքտիր բիրադի ըսկուն չին, խալէ չ'ունին: Կեացին, էն չադրը տակ: Սիւսին — Ջհադուն գինի կ'տայ, Ֆէլասըն կըլնը ձեւքիւր կ'կապի, թլի չադրի տակ:

Ֆէրամազ էկաւ, մարտ չ'կայ չեողէն չինի. գիւր ձին խեճաւ, խալ կինաց, ասաց. — Եիս տ'երթամ խասնիմ, էնունք իրարուց մարտ չ'սողանին, Կինաց խասաւ, ինչ կ'իրիշի. մէկ չադր գեոյ զարկած չանդեդ. կ'իրիշի, կ'տըսնը մէկ կնիկ նստի, չադրի չառաջ, սազ կ'գեարկի: Կինաց տիմաց տեատրաւ:

Կնիկ ըսաց. — Տիւ գիտիւ, եիս ինչ կնիկ իմ:

Ըսաց. — Եիս, չեմ գիտը տիւ վով իս, էն փալաւանքտիր էկան էստեղ, չիւր ի կինացած:

Ասաց. — Եիս չիմ գիտի: Ինչ ասկուն ասաց, մէ կամչի էգար: Էնի էլաց. ինչ էլաց. Ֆիլասըմ չադրը տակէն տիւս էկաւ, կանչից Ֆէրամազին, ըսաց. — Քի ինչ կայ, կ'գեարկիս էդ կնկան:

Էրկուս առին չիրար, կռուան, էրկինք, գետինք խառնուաւ. էնքան թող էղաւ գետնուց, էրկնուց իրիս պոնից. էնունց գիւրդի ձէն ընկաւ ախշարք: Ֆիլասըմ զօրն. Ֆէրամազից առից, էլ Ֆէրամազ չ'կերի դարբ գեարկի, հըմա օր բարաւան կ'էնի: Զալ էկաւ չեողէն, մարտ չ'կայ. էկաւ կ'իրիշի, ինչ կ'իրիշի, Ֆէրամազ, Ֆէլասըմ իրարու կ'գեարկին: Կանչից, ըսաց. Ֆէրամազ, Աստուած քինէ առիք ի, տիւ խատ Ֆէլասըմին կռիւ կ'էնիս:

Էլաւ, ըսաց. — Ֆիլասըմ, ըսաց, քիւ քէֆ լաւ ի, քիւ թաղաւորի քէֆ լաւ ի:

Ֆէրամազ Ֆէլասըմի ձեռաց տակէն էխան տիւս, ասաց. — Կինա Ռոստամուն ասա շուտ կեայ, խասնի:

Ռոստամ էկաւ խասաւ, բեռնաց վեար Ֆէլասըմին, Երկուս առին չիւրար, էնքան գետրզ կ'գեարկին չիւրարու, որ դա աշխարհ էնոնց գիւրգու ձէնէն խլացան։ Իրիք օր իրիք գիշիր գեարկիցին չիւրարու։ Ռոստամ մէկ գիւրզ ըմ էգար Ֆէլասըմին, զՖէլասըմ էցկից ձիուց, էցկից տակ, զթուր էգար, վիզ կռից, զգլեոխ առից, տարաւ թագաւորին։ Ելաւ կինաց չադր էպի, էգար էնու չադրի մըղաբըլ, ըսաց.— Բրգօ, ըսաց գնա դարաւիւլ քեաշի, Թուրանայ թագաւոր չ'կեայ միր երկիր զաւթի։

Բրգօ կինաց։

Ռոստամու խելք էկաւ գլեոխ, խելք էկաւ գլեոխ, կանչից ըսաց.— Գետրզին, չէլի կինա, խասի Բրգօն, Բրգօ տղայ ի, տը քընը։ Գետրզին կինաց, խասաւ Բրգօն, կերիշկի Բրգօն զգետրզ տրի զլխուն, քնիր ի Մնաց քիչ ըմ, տեսաւ լիւսցաւ, արիւ առից. էնքեան ասկեար Թուրանայ թագաւոր առից էկաւ, քեանց աստղ յերկնուց, աստղին հաշիւ կայ, էնու աւքեարին հաշիւ չ'կայ, Էնունց թող էղաւ Էրկնուց չիւրիս պունից, էղաւ մութ գիշիր։

Գորգէն կանչից, ըսաց.— Բրգօ, չըլի վէ, ասաց, չուր եիս կռիւ ըմ չ'էնիմ, ջոհաք չ'ըմ տանի Ռոստամու։

Բրգօ զգետրզ պունի ձեռ, մէկ մէկ կ'ջեարտի աւքեարից։

Թուրանայ թագաւոր ըսաց.— Ինչ էղաւ, ըսաց, իմ աւքեար տեստրաւ, ըսաց, ոլահ, ըսաց Բրգօ չիւջիւ աւքեար պունիր ի, չ'թողի մարտ էրթայ։

Ըսաց, եիս քի ասի գերգօ սպանի, տիւ չ'սպանիցիր, տիւ Փիրանի խօսք էրիր, թըղ Փիրան վրը պեանի՛մ կապի։

Փիրան կանգնաւ, քշից կինաց, մա Բրգօ, ըսաց.— Բրգօ, ըսաց, տիւ Խնյու խը քեռ թագաւորին կռիւ կ'էնիս. Իրանայ թագաւոր գքի խափիր ի, Ռոստամ քի կ'ասի. տիւ Զորաբու տղէն իս։

Ըսաց.— Գետրզին, տիւ կաց պեարով, ես տ'երթամ մըտ Թուրանայ թագաւոր։

Գետրզին չ'էթող մարտ ընցնէր։

Բրգօ գնաց, տ'էրթէր թագաւորի ձեռ պագնէր. զթախտն ինչ կապած ի, ձեռ էթալ զթագաւորի թախտ քեաշից, զթախտ առից, փախաւ։ Ընցկուն գետրզ կ'կեայ վըր Բրգօ զլխուն, ընցկուն կարկուտ կեայ էրկնուց, Էնու թախտ առից, տարաւ չիւր թագաւորի խամար. թագաւոր էլաւ Բրգօ գլեոխ պագնից, շատ խքրամ Բրգօ խամար էրաւ։

Թուրանայ թագաւորի օրդում եկաւ տիմաց Իրանայ թագաւորին եգար։

Թիւրանայ թագաւոր խըտ Իրանայ թագաւորին կանունով խիտ խուսաւ, ըսաց. Յիս տիւ տը կռուինք, ախշար ընչո՛ւ տանք ջեարտիլ, խլիտուն եիս տիւ գիւլաշ պունինք. թը տիւ զձի կոխըցիր, Իրան քիւն ի, Թիւրան էլ խասնի քեզի, թը եիս քի կուխիցի, Թուրան իմ ի, Իրան էլ խասնի ձիկ.

Ինչ Թիւրանայ թագաւորն ի, աղէկ կտրիճ փահլիւան ի, ինչ Իրանին ի, բէւոջ ի:

Բրգոյ ըսաց.— Թագաւոր, չէ՞ տիւ ըսիր իս, Բրգոյ իմ տղէն ի.

— Իա, ըսաց, եիս մկայ էլ կ'ըսիմ, Բրգոյ իմ տղէն ի.

Հսաց.— Որ եիս քեո տղէն իմ, եիս իմ խօր թիւրէն տ'երթամ կռիւ.

Բրգոյ զիւր ձին խեճաւ, զիւր սիւախ կապից, զիւր գեորգ առից, կինաց կռիւ խը Թիւրանայ թագաւորին.

Էն դեխէն Թիւրանայ վզիր կանչից. ըսաց.— Թագաւոր, ըսաց, Իրանայ թագաւոր չ'իկիր, ըսաց. Բրգոյ իկիր ի, թըղ կեայ Բրգոյ իմ ձեռաց տակ, իմ կազաքքիր արիր ի էրուն.

Ռոստամ ըսաց.— Բրգոյ գնաց, եիս ինչ իմ մնացիր էստեղ:

Ինչ Ռոստամ կինաց, սազիր զեարկիցին, երկու օրդուն կայնան, խասան չիւրուր. էնքան մարտ չիրարուց կ'ջեարտին, ընցկուն քեամին զեարկի ծառիւր թաւիր շուռ տայ գետըն, էրուն էղաւ զջանդաքտիր կ'տանը:

Ֆէրամաշ քշից, գնաց խասաւ չադրի տուան մուտ, զՍիւսուն ջաղուն իպի, ճղից. իրարուց տապկից. զվաթսուն փայլւան տիւս էխան, վաթսուն փայլւան Գեողարգուն թորկից. Էկան, էկան խասան կռուուն, իրիւք օր, իրիւք դիշիր զեարկիցին իրարու. իրար ջեարտիցին. Թուրանայ թագաւոր փախաւ. Աւաշահ-դաւուդ Թուրանայ կուշում ընցաւ: Իրանայ թագաւոր, Ռոստամ չիտ տեարձան, որ սպանուաւ, տիւ ողջ մնէք, ւր սաղ մնաց, խասաւ չիւր տուն. Էնի խասաւ չիւր մրազին, տիւ խասնիւք ձիր մրազին.

Գ.

Գեարիւն ի, տաս օր Նիսան կինացիր ի, քսան մնացիր.

Ռոստամ ուր մարտիր ժողովից, ասաց կուրուղչուն.— Կինա սահրանգէն, տըսի չաչիրքիր շինուիր, թի չէ, ճաղտիր եղիր ի, թի չէ, մէհինք ախպուրքիր եղիր ի, մհա վիրու օչխար կան մէչ, խազալ կան ինի, մինք տ'երթաք սէհրանգէն սէհր անիլիւ.

Ըլաւ զթխտիր կիրից, չրեողկից քաղքնէ.բ. Միրաբէ Քաբլին իւր կուշումով իրի, Տիւէ նազարի ուր կուշումով իրի, Գուրգինի ուր կուշումով իրի, չրեողկից զԳոդարդ ուր կուշումով իպի. չրեողկից Ջանգէ Ջահուրի իպի, չրեողկից Գիւ իպի. փալաւանքտիր բիրադի բարաւից. էլան ուրինց չադրքիւր առին. կեացին, սէհրանդի մէջ զեարկիցին գետըն, էլան զկանաչ կարմիր թալիցին չադրի վերայ. քեամին կ'զեարկի, կ'վիրուցի:

Ռոստամ էլաւ զԳրգոյ Ֆէրամազ չրեողկից ճամբսի վերայ դարաւիւ. զԳիւ չրեողկից կարմնջի վերայ դարաւիւ, ուր կուշումին իզին ետու, ասաց. —Սահրանգի մէջ ուրախութիւն ըրէք ձեզի խամա. զվերու օյխար սպանըցէք, զչաչիրքիւր արծացէք, զպիւլիւր ծաղկտիր կոխընըցէք:

Յախագուրնիւր բիրադի աւիրիցին. Ռոստամն էլ էնքան խմիր ի, սարխոշ ի, ալախ չ'ուռնի. Սահրանգէն աւիրիցին, թող էտու վերայ: Ռոստամ կանչից փալաւանքտիր իպի, ըսաց. —Եիս խլիսուն տ'երթամ Լիֆասիան Ջաբա —Փիշանի սէհրանգի մէջ նստիմ:

Էլ ըմ խիւք գլխուց կինաց. Մ'նաց լիւսացաւ: Էնու փալաւանքտիր ասըցին —Մինք չինք կիրի էլըմանք էնտեղ (իրարու կ'ասին):

Ռոստամ խլիսուն ալախ էկու վերայ, նստաւ. կանչից փալաւանքտիրուն, ասաց. —Եիս չիրկուն ինչ ըմ ասի:

Ասին —Մինք չինք գիտը:

Ուրացան:

Կանչից Գիւ իպի, ըսաց. —Գիւ, եիս չիրկուն ինչ իմ ասի. Ըսաց. —Տիւ չիրկուն ասիր իս, մինք տ'երթանք Ալֆասիա —Ջաբա —Փիշանի սէհրանգի մէջ նստինք, զէնու չաչիրքիւր բիրադի տ'արծանք, էնու ծաղկտիր բիրադի տը կեռիսինք, զէնու չաղպրքիւր բիրադի տ'աւրինք, տեառնանք, կեանք, էթանք միր տուն, նստինք:

Էլան զչադր խիւաթ վիրուցին, էլան կեացին Ալֆասիայ սէհրանգի մէջ նստան: Ռոստամ բադր էգար Ալֆասիայ՝ չադրի տեղ, չադր ըմ էգար Հըմանի չադրի տեղ, չադր մ'էգար Փիրանի չադրի տեղ, Գիւու չադր էգար Ղարամանի չադր տեղ. չադր մ'էգար Ֆիլասըմի չադրի տեղ, փալաւանքտիրու չադր էգար Թիւրանայ փալաւանքտիրու չադր տեղ, Էլաւ զԳրգոյ Ֆարամազ չրեողկից դարաւիւ, Գիւ Գոդարդ չրեողկից կարմնջի վերան դարաւիւ, իզին ետու կուշումին, զղուշում բրախից, ասաց. —Ընկըցէք սէհրանգի մէջ, ձե խսմար՝ նէհիր արէք:

Ջչաչիրքիւր բիրադի արծացին, զծաղկտնիւր պիւլիւր կոխըցին, զչաղպրքիւր բիրադի աւիրիցին. թող մառախուն էտու վերայ սէհրանգին:

Թխւոյնայ թագաւոր նստաւ վեար ուր թախտին, պիւլիւր կանչեց իւր վզիր, փալաւանքտիր, բիրադի ժողովոց, էսաց. — Ղուրուդ-էն, ըսաց. կինս իրիշի մի սահրէնգին բացուիր ի, ձիւն վերէն կինացիր ի, մե չայիրքիր եղիր ի. վէրու օյխար կնչ ինի, թի չի, մինք տերթանք սէհրանգէ ուրախութիւն էնինք մե խամա:

Կուրուդչին առեց զգիւրքին, կ'նաց, սէհրանգէն իր շից, տաս ւերկու խէւաթ գեարկած սահրանգի մէջ, իր շից գիւլաթ քիր իրա-րուց ճիւկից, դեարձաւ չիտ էկաւ, զգիւրքին եթ ըլ չիոջիւ թագաւորին, հիւու տեստրաւ:

Թագաւոր ըսաց. — Էդ ինչ էդիր քեզի.

Էսաց, — Տասերկու խէյլաթ մեաչ քիւ սէհրանգին տրած ի, ըսաց, խէւաթ ըմ քիւ խէւաթի տեղն ի գարկած, խէյլաթ ըմ Ղար-ամանը խէւաթը տեղն ի գարկած, խէւաթ ըմ չըմանը խէւաթի տեղն գարկած, խէւաթ ըմ էլ Փիրանի խէւաթի տեղն ի գարկած. փալա-ւանքտիրու տեղ բիրադի խէւաթքիր գարկած ի, ըսաց, չայիրքիր էրըճացած ի, զճաղկըտիր կոխած ի, զվէրու օյխար սպանած ի, զչաղ-պըրքիր բիրադի տրած ի, սէհրանգիւն ըսկուն էրած, թոզ ու մառախուն, ալ տէր չճանչնայ:

Ասաց. — Վի չաղընիւր ի, տիւ չիս ճանաչի, վիւր չաղընիւրն ի:

Էսաց. — Ձադը ըմ նահընգեա՛յ, խէյլաթ ըմ պիւնդի ա, խէյ-վաթ ըմ շիքիլի ուժիւ, խէյլաթ ըմ շիքիլի շափա, խէյլաթա քիւ ասմանիւ, խէյլաթա քիւ շանգաւիւ ձիւմ էլ խէյլաթի տիւ կապուկ ի. էնու ականջքիր էրկնուց խիտ, մէկ փալաւան էնտեղ քնիր ի, եաման էնու գեորդ:

Թագաւոր ըսաց. — Փ'րան, վզրին ըսաց, էն վիվ ուր խուկիւց կշտացիր ի, եկիր ի իմ սէհրանգի մէջ նստիր ի:

Էսաց. — Թագաւոր, Ռոստամէ Զալ չ'ընը, ախշրի վերաց մարտ չ'կայ կեաց քիւ սէհրանգի մէջ, չասօր իկիր ի վաղ տ'երթաց, ընցկուն էնինք վեար մեզի չ'ակախած:

Բհար էտու դեախ մէկ էլ վզիր, ասաց. — չըման, էն վիվ ի խուկիւց կշտացի, իկի իմ սէհրանգի մէջ, շատ կլազ ի վըր ուր ումրի:

Էսաց. — Տիւ տը զձը չ'խարցնէր:

Յրեողիւց զքաթըպ պիւ. — մէկ կիր կիրի, կանչինք պիւլիւր ախ-շարք ժողովինք, էրթանք էնունց չուրս պիւլիւր պանինք, խարրա-պիր էնունց մնէն չ'պըրճնի:

Էսաց. — Է՛, ըսաց, մէ խալաթ պիրէք չըմանի խամար, ըսաց, չըման աղէկ փալաւան ի:

Էլան կանգնան, տըսերկու խաղար մարտ սարը եանէ չընող-կ'յլն, կ'նաց. Թագաւոր ուր թախտմով ճամբիւ խիտ կեացին:

կեացին խասան տէմաց կարմնջին. Գիւ զկարմունջ պուն/ր ի. չ'թոր-
կի մարտ ընցնը: Էնքան զեորզ կ'գեարկին Գիւուն, ըսկուն ինչ տար-
պ'ս կոանքտ/ր կ'գեարկի: Գիւ զկարմունջ չի թորկի, ճամբախ չի
տայ:

Կանչից Թագաւուր ուր վզրի վրայ, ըսաց.— Էս ինչ մարտ ի, էս
կարմունջ պունի ի:

Ըսաց.— Գիւն ի, ըսաց, էն մարտն ի, ինչ եօթ տարի չոյի մէջն
ի կացիր, էն ինչ պորընգիս Քեանգըհու քեաղքէն փախըցուց,
էն ինչ խատ չիւտնահիւթուն կռիւ էրի:

Թագաւուր մօտխասցաւ, կանչից, ըսաց.— Գիւ, ըսաց, խեղ ձի
տիւ իմ փալաւան ըլնիր, եիս քի աղէկ քեայիր ձի տը տէր, գքի
աղէկ սիլախ տը տէր, եիս քի մի՞՞ք քաղքընի բեախշիշ տը տէր:

Ըսաց.— Է, քիւ աչքիր չիտ պեաց. եիս իմ մէջլ չիմ իտայ մէկ
պեռ կուրիկ (էն'կիսս քեան պեռըմ կուրիկ չ'հաշիւից):

Ջաւարէն կանչից, ըսաց.— Ռոստամ, քինուց վիր իլի, զԳիւ
սպանըցին:

Ռոստամ նստաւ, կ'իրիշի կ'ըլսի Գիւու ձէն կ'երթայ երկինք,
ընցկուն կռիւ կ'էնին:

Ըսաց.— Է, ըսաց, մէկ թաս գինի տուէք ձի, Գիւու ձէն անիւշ
կ'կեայ կրուու մէջ, քեանի Գիւ սաղ ի, ախշար մազի փարէմ չ'էնի:

Ռոստամ էտու քընու:

Թիւրանայ Թագաւուր վեար Գիւուն կանչից, ըսաց.— Գիւ, ըսաց,
էրանի ան մարտուն, ինչ տիւն խզմաթ կ'էնիս, ըսաց Գիւ, էրանիք
էն մարտուն, ինչ տիւն էնու փալաւան խ:

Թիւրանայ վզրին մէկ ախպէր կէր, անուն էլ Ֆիլասըմ, ջան-
կեախ էկաւ, խասաւ, կրուուն:

Յըման ըսաց.— Թագաւուր, ինչ տիւ կ'ըսէր աղէկ ձին տուէք
Ֆիլասըմին, ըսաց, կեոյ քիւ Ֆիլասըմ էկաւ, տի ինչ էնի:

Թագաւուր կանչից Ֆիլասըմին, ըսաց.— Ֆիլասըմ քենէ գիտիմ:
Ֆիլասըմ Գիւուն մօտխասցաւ, զեորզ ըմ էզարկ Գիւուն, զԳիւ
կարմնջից էթալ, էտու վեար Գիւու փուրուն, ընցաւ Տաս փալաւան
խատ էնու երկու վզրին ընցան սէհրանգըհի մէջլ Գիւ էլ ըմ կանգ-
նաւ, էն եանէն էթըլ, էս եանին էթըլ, էլ ըմ էկաւ, վեար կարմն-
ջին նստաւ:

Ջաւարէն Ռոստամուն կանչից, ասաց.— Ռոստամ իլի, Գիւ սպա-
նիցին, զկարմունջ առին, չիւրս պիւլիւր էղաւ կռիւ:

Ռոստամ էլ էլըմ նստաւ, կիրիշի Գիւու ձէն կ'կեաց, գլեռի էտի գետին քինաւ:

Մեհրաբէ Քարբի գետրդ վիրուց, էկաւ դեախ ֆիլասըմ. գետրդ ըմ էգար ֆիլասըմին. ֆիլասըմ մարտալ ետու չիւջիւ ֆիլասըմ գետրդ ըմ էգարկ Միրաբէ Քարբին, էտու վնար էնուր սրտին, ձիուց իւզի տակ, ընցաւ. Զանգէ Չահուրի գետրդ վիրուց էկաւ դեախ ֆիլասըմ. գետրդ ըմ էգարկ ֆիլասըմին. ֆիլասըմ մարտալ էտու չիւջիւ ֆիլասըմ գետրդ ըմ էգար Զանգէ Չահուրին, ձիուց իւզի տակ:

Նըման զթուր քեշից, կ'նաց վնար Ռոստամու չաղըր տրան, տը գրոստամու վիզ կտրի, իրիշից, պառաւ ըմ կեռչ յանդեղ. կանչից ըսաց.— Նըման, տիւ ինչ էկիր իս ըստեղ, կըխֆս էսա կտաւ, էսա սապուէն, էսա պղինձ ճիւր, տը գքի վլամ, քիւ պատանք կարիմ (հրիշ տակ էր, շանք էտու):

Նըման փախաւ. Զաւարէն զգետրզն առից, կ'նաց դեախ ֆիլասըմ. գետրդ ըմ էգարկ ֆիլասըմին. ֆիլասըմ մարտալ էտու չիւջիւ գետրզին, զմարտալ կուտրից:

Ըտաց — Էս մարտ Ռոստամն ի, Ռոստամ չ'ըլնը, մարտ իմ մարտալ չըր կուտրի:

Մէ գետրդ էգար Զաւարին. Զաւարէն ձիուց իւզի տակ. զթուր քեշից վիզ տը կտրի, Բեռուաց Զաւարէն. Ռոստամ լսաւ էնու ձէն. որ լսաւ, նըստաւ. կ'իրիշ մարտ ըմ Զաւարէն տիրի գետին, թուր քեռաշիր, վիզ տը կտրի. Կանչից վերէն, ըսաց.— Եիս էն կ'սիրիմ, ինչ գերկինք գետինք ստեղծիր ի, տիւ թուր տնիս, էնու վիզ կտրիս, եիս տ'ըլնիմ մէկ գիւրդ գեարկիմ քի, եթ տապաղէն գետնու տակ մտնիս:

Ըսաց.— Գըղը քեռաֆր, ըսաց, իմ խիալ էն տիւ իր:

Զաւարէն էթող, կ'նաց դեախ Ռոստամ.

Ռոստամ կանգնաւ լահ ուր թուր կապից, նիրիզ խանջար էգար մէջք, էնու պիւռ զթիւ ընցաւ, զտիրկեաւան կախից, գքեամար կապից, զգրեխէ շապիկ խակաւ, գքիւրք էթլը վըր թիւին. աչքիր շուռ առից, Նըմէն մէ քեան չինու կթխէ. էնու բեղիւր օլրից, զաւանջ ընցաւ, էնու մագիր կանգնան, զրեխէ շապիկ տիւս էտու. Կանչից սալիսքիրուէն, զձին թիւրիցին, սողաֆիէ զին իտի քեամակ, ալտուղլամայ զքքեք կախից, ձեռ էթլը զգետրդ վիրուց, իրիք խարիր բաթման, տիր ըմ կանչից վերան, էրկու առին չիւուր. Ըցկուէն գետրդ կ'գեարկին չիւարու, անցկուէն ինչ կարկուտ կեաց:

Քեալստիր իբըն Բարաք ալախու, թի Ռոստամ կ'նացիր Թիւրանայ թագաւորու սահրանգի, առից ուր զուշում կ'նաց, ասաց — Եիս չ'երթամ զՌոստամ տ'սպանին զուշումով: Եկաւ տեսաւ Ռոստամ

կ'անցնի կռիւ Գիւ զկարծունջ էթող, Թիւրանայ թագաւոր լցուաւ մեանչ սէհրանգհին: Ձատ մարտ ասաց. «ախշարք աւրաւ»: Թող էզիրի, էրկնուց իրիս ի պոնի:

Ոոստամ զեորդ ըմ էզարկ, զՖիլասըմ սպանից, Սաղիր զեարկիցին: Իրանայ թագաւոր, Թիւրանայ թագաւոր, էրկու կուշում առից չիրու: Էնքան իրար ջեարտիցին, էրուն էղաւ զիտ, զջաղաքտիր կրտանը: Տիր ըմ թրըխուց ընգեաւ Թիւրանայ թագաւորու ասքեար, Թիւրանայ ասքեար փախաւ: Իրանայ թագաւոր ինգեաւ չիտիւ, Աւաշահադառին ընցաւ: Իրանայ թագաւոր չիտ տեսարձաւ, որ ըսպանուաւ, տիւ ողջ մնաք, որ մնաց, կինաց ուր տուն, խասաւ ուր մրապին: Տիւ խասնէք ձի մրապին:

Գ.

Իրան Թիւրան կէր աշխարք. Իրանայ թագաւորու անուն Քեադաիր ի Էնուր էրկու վզիր կայ, մէկի անուն Գիւ ի, Գոդարպ կ'ըսին, մէկն էլ Տիւսէ Նազարի կ'ըսին:

Տիւս ըսաց.— Գիւ, չիլի էրթանք Տովու պերան սէհր էնիլիւ: Էրկուս խըտիրաց կեացին: Ինչ Գիւն ի, աթղըհարն ի, ինչ Տիւս թիթըլ ի: Կինացին Տովու պերան կամըշ կէր. ինչ Գիւ ճիւշ էր, չէր կէրի քէլի մէշ վէ, ինչ Տիւս պրդտիկ էր, հմայ մտաւ մէշ վէ ընցաւ: Կինաց խասաւ Տովու պերան. կ'իրիշի կ'ըխը մէկ աթղահար ըմ գլեռիս տրիր մաշիրիսիկ կիւք, քինիր ի: Աչքիր էպաց, կեոյ Տիւս մօտ տեստրիր ի: Էն էլ ձեռ էթըլ զՏիւս պոնից. իպի գլեռիս իտի մեաչ իւր էրկու ոտ, վուտքիր կ'ըից չիւրիւր, էլ ըմ քինաւ: Տիւս բեռուաց, չ'կեր: փախը, համայ կ'բեռուայ: Գիւ յաւ. Գիւ էլ թնչ էրաւ. հըմայ զթուր քեաշից, գկամիշ կտրից. իլաւ ճամբախ ուր խամար, կինայ, խասաւ մա Տիւս: Կիրիշի կ'ըխը Տիւսու գլեռիս կեոյ մեաչ աթղահարու էրկու ոտնիր: Տիւս չ'կէրի մօտէն Տիւս կեայ: Ան էլ ձեռ էտու զմաշիրուսիկ գլխուց վիրուց, զեորդ ըմ տիւց վեար գլխուն, գաթղահար սպանից, իլաւ առից զմաշուրիւսիկ, էկին:

Գիւ զմաշիրիւսիկ առից, տարաւ իւր տուն: Տիւս կինաց թագաւորու զիւան, ըսաց.— Թագաւոր, ըսաց, ախշար ընցկնայ պեան կ'ըլնի:

Ըսաց.— Վրթ, թնչ էղի:

Ըսաց.— Վով զեախմ էլնը, ինչ ըսը ուր խամար կ'ըխըլի:

Ըսաց.— Վիվ ի խի:

Ըսաց.— Եիս կեացի Տովու կրաղ, մէկ աթղահար ըմ սպանըց, մէկ մաշիրիւրկ ընձի խամար պիրըը. Գիւ քան ձի

զեախմ էր, էզար, ձենէ խից, տարաւ Յրեողկին յիտի Գե-
ւուն. Գեւ իպի Գեւ ըսաց, — Զէ, եիսն իմ սպանիր, Տիւս բէբախ-
տովթին կէնի.

Ըսաց. — Ո՛ր ացկունի, ըսաց, առէք տարէք մեաչ մէյդընին զան
մ աշխարհիսկ, էրկուս որ կերչ, ուր խամար թըղ տանի.

Թագաւոր իպի թուխտ ըմ կիրից, Ռոստամու խամար չրեողկից
ըսաց, — Ռոստամ գլեոխ թացիր իս, կեաս ըստայ գնդիս:

Ռոստամն էլ կանգնաւ, ինչ պեան ըլնէր, ուր խօր մօտէն
խարցմունս կ'ընէր, էն օր խարցմունս չ'էրաւ, համայ ուր ձին
խնձաւ, կինաց. կինաց տեսաւ, կ'ըլսը Գողարզու թախում ուրինց
չադր խէյվաթ էս եանի զարկած, Տիւս զիւր մէկ էլ եան ի զեարկած.
փալաւան բտիր էկած մեաչ մէյդընին, կեախ, զեարկին յերարու.

Ռոստամ խասաւ մօտքիր — Ե՞լ ի՞նչը կ'կուռէք:

Ըսաց. — Վեար նա կնկան կ'կուռինք:

Ռոստամ էլ, խասաւ, վիրուց էթըլ իւր ձիու քեամակ, ըսաց, —
Զի մարտ կ'ըպը, կեաչ ձենէ առնը: Առից, զինաց, էնունք էլ չիւր-
րուց ցըրըւան, ըսաց, — Մինք չուր մկայ օլուշաղ չաբով կ'կուռինք.
մկայ վեար ինչը կ'ուռինք:

Իրարուց ցըրւան, Ռոստամ զօղլուշախ տարաւ, չրեողկից
թագաւորու չեողէն, կինաց տէմաց թագաւորին տեսարաւ:

Թագաւոր ըսաց, — Ռոստամ, գիտիս, եիս ի՞նչ արով չրեողկիր
իմ յիտի քի:

Ըսաց, — Զէ, որայ, չիմ գիտր:

Ըսաց, — Էն չաբով չրեողկիցի յիտի քիտ, մէկ օլուշաղ չաբով
Տիւսու տուն Գողարզուն կ'կուռին:

Ըսաց, — Են նայ բաբաթ ի Տիւսուն, մէչ Գողարզուն, էն
բաբաթի թագաւորին:

Թագաւորն էլ շատ ուրախացաւ. իլան, պիրին թագաւորի
խարսնիք արին:

Թագաւորին մէկ տղայ կէր, տղի անդուն էլ Սիւաուշ էր: Ռոս-
տամ ասաց. — Թագաւոր քիւ տղէն տը տաս տանիմ, պախիմ, չմնայ
մօր մօտ, մէր մուրու ի:

Էլաւ, առից զթագաւորու տղէն, տարաւ. մնաց թագաւորու տղէն
մէկ օր ձի խեծաւ, էկաւ խոր քեաղաք, խիտ Լնունց տէղտներուն
հեոյ կ'խաղայ, մէկ չիւջիւ չըմնաց, կ'տանը, գիւլաշ կ'պոնը մէկ չին
կէրի վերան: Էն մէկ օր Թագաւորի կնիկ կնստի չերգիս, թամաշայ
կէնի. թագաւոր էկաւ տուն:

Ըսաց — Թագաւոր, ըսաց, մէկ ազէք մ'իմ տըսիր ըսաւ, մէկ տղայ ի, սիւ շիւրիք խակիր ի, մէկ ձի խեծիր ի, կկեայ էստեղ խա մի տղէնքրուն հեռ կ'խաղայ, մէկ չին կերի խիտ խաղայ, գիւլաշ կը պունի, մէկ չին կերի վերան:

Ըսաց. — Ձէ, էնիկ իմ տղէն ի:

Ըսաց. — Էն քիւ տղէն ի, ջիւր եիս չիմ տըսի:

Ըսաց. — Ան օր ինչ քի պէրիր իմ, ան օր վէ Ռոստամ տարի, կ'շախի:

Ըսաց. — Դիտիր, բէբախտ Թագաւոր, տիւ բէբախտ իս. վեաղ տըսին մուրու մէր ի, գիւր տղէն չի շախի, էն արով տարած ջանդեղ կը շախին:

Թագաւոր էլաւ քեոդկից իպի, գիւր տղէն, շախից. շատ անախուն հազ ունէր մօտէն:

Ժամանակ ըմ ընցաւ, մէկ ըսաց. — Սիւվուշ, ըսաց. էրթանք սիւ սար քիւ խօր սէհրանցիւն:

Իլաւ քիրիկուն ուր խօր ասաց. — Մի հող ընինք, վեաղ էրթանք սէհրանգի նէճիր:

Ըսաց. — Էնու պէրան կուտրէր, ինչ քի շանք ի տուի. էսա ութ տաւրի կայ, եիս ջանդեղ նէճիր չիմ կեացի. ինչ, կեախ կեացիր իմ, շատ զարար իմ քեաշիր:

Իլաւ կանչից, գիւր փայաւանքտիր ժողվից, ուրինց թըզարիք տեսան, ուրինց սիլախ աւին, տասուերկու խազար փայաւան ետու քիւրիւր, էլան քեաղքէն կեացին. իրիք սհաթուան ճամբախ քեաղքէն զատնացան:

Թագաւոր իրիշից. — Ըհա, իմ բազբանգ մուռցիր իմ:

Սիւվուշ ըսաց. — Թագաւոր, եիս տ'երթամ քիւ բազբանդ պի ըիմ, եիս չ'երթամ, մարտ չ'կերի էրթայ, պիրի:

Ան էլաւ կինաց. ձին կապից տիււ, կինաց զբազբանդ առից, տը տեաւնէր: Մէր կանգնաւ մէկ շեարբաթ ըմ շինից, ետու լաճը ձեռ. լաճ զշեարբաթ խմաւ, տիւս տ'ինգնէր: ձեռ էթըլ զլաճ կիւ պունից:

Ըսաց. — Մարէ. էտ թնչ տէնիս:

Ըսաց. — Նեայ քեանի տարի կալ, եիս քի յաբով իմ նստիր ըստեղ, քիւ խէր մէկ խալիւր մարտ մի:

Լաճու ճարէն կտրաւ, եախէն փակից: Ըդ էլ մէկ բռնցքի մ էզար, ատամքիր կուտրից, Իլաւ, էկաւ զձին խեծաւ, կինաց խասաւ խուր, խէր էն կեախէն իրիշից. — Սիւվուշ, ադ թնչ էղիր քի, ացկուն քիւ ռեանգ կեացիր ի, տեալ մինք իրիք սհաթ ինք Աստաթսու քեաղքէն զատնացիր ինք, տալ մինք նիւր տ'երթանք մեանչ Յիւտնայիւտ, տալ մինք նիւր տ'երթանք Դիւարտան:

Ըսաց. — Կակոյ, եիս չիմ վեախացիր, իմ ատամքիր կ'ցաւը, իմ
ռեանդ չիռջիւ կեացիր ի:

Ըսաց. — Իլի տեառնանք, կեանք տուն:

Լաճ ըսաց. — Ձէ, տ'երթանք, չ'ինք տեառնայ:

Իլան կեացին սէհրանդի մէջ, ուրինց ուրախութիւն էրին, ուրինց
նէճիր էրին. Սիավուշ ուր ձին խեծիր, էղիր զարավիւլ էնկիաս
ասքեարին:

Տաս օր մնացին մէջ սէհրանդին, տաս օր թըմըմաւ, ըլան
տեարձան, եկին տուն, խասան տէմաց քեաղքին:

Թագաւուր դիւրբին իտի ալից, իրիշից էնու օթախ բիրադի
սիւցիր ի, ըսաց. — Յը, չասի, եիս վնաս տը քեշիմ:

Ինչ թաշաւուր, կինաց օթախ ինչ լաճն էր, կինաց դիւանխա-
նէն: Թագաւուր կինաց իրիշից, կ'ըլսը ուր կնիկ նստի վեար տեղաց,
նմուշ արանթըթախ ի, ըսաց. — Էդ ինչ էղիր քի:

Ըսաց. — Տիւ զը խափիցիր, ռոսպի'մ պիրիբ իս, կ'շախիս, կ'ըսիս
իմ լաճն ի:

Ադ էլ կանչից զԳիւ, Գուրգին առից իպի, ըսաց. — Կ'երթէք իմ
լաճու վիզ կորէք, էնու արուն պիրէք, եիս խմիմ, չիտչ գձի մայթաթ
բիրադի տը կորիմ:

Ըլան տեարձան, կինացին, կանչիցին, Սիավուշ խանիցին տիւս.
ըսաց. — Սիավուշ, քիւ խէր կ'ըսի փլան քեաղաք կոլի ի, կեացէք. մը
թորկէք:

Էդ իրեքն էլ խեծան, կեացին: Գիւ, Գուրգին խատ իրարու
ուրինց շիւրր ըրին. — Մ'ինք ինչըլս էնինք, պիրինք սպանինք,
կ'ըլնինք թագաւուրին խունդար, չի'սպանինք, թագաւուրի ջհաբ չինք
կէրի տայ:

Սիավուշ ըսաց. — Գժւ, ատ ինչ գեաղտիկ խատ իրարու կ'խուսէք:

Ըսաց. — Վալաչ, էս պեան չաբով ի:

Ըսաց. — Քիւ պերան կուտէր, տիւ ան օր ձը տուն տ'ըսէր, եիս
էն թագաւուրը վիզ տը գեարկէր, թեախտ նստէր:

Ըսաց. — Վի պեամ' էրա:

Ըսաց. — Ինչ էնիմ: — Վի ահդ էրա, քեանի քիւ խէր Ժիր ի, տիւ
իրանայ խող չմնաս, գքի չիմ սպանը:

Էլաւ ադ էլ դեաստ ըմ շուր խակըցուց Սիավուշին, Սիավուշի
շիւրիր մօտէն էխան, խե խողաց ճամբխին էգար մէկ շուն
սպանից, շուրիր թաթխից մեայ էրընին, առից իտու թագաւուրին. —

— Առէք քիւ լաճու խալաւքիր, գքիւ լաճ սպանիցի, անու խա-
լաւքիր պիրի:

Սիավուշն էլ կինաց Թիւրան, Քեանգաւոյ քաղաք տիւա ինգեաւ. կինաց Թագաւորի գիւանխանէն նստաւ. չիրիկուն ընունց խաց պիրին, նստան խաց կերան:

Թագաւոր իրիշից, Սիավուշ տեսաւ, վզրին կանչից.— Փիրան, էս մարտ տար քիւ կոնաղ, եիս կ'իրիշիմ էն մարտի նստիլ կանգնիլ, էս մարտիւ խաց ուտիլ, էն մարտ մաղկուլ մարտու տղայ ի, չ'կենաց էստեղ, չիւր կ'խարցնինք մհա ինչ մարտ ի:

Փիրան տարաւ ուր տուն. էլաւ մօտէն խարցնից. «տիւ ձրտեղաց իս»:

Հսաց.— Եիս Իրանայ Թագաւորու տղէն իմ, Սիավուշն իմ:

Էլաւ ձեռ էտի սրտին, տիմաց տեսարաւ: Փիրանի կնիկն էլ էնունց կերակուլ, ճիւր կ'պիրի:

Իրիք օր մնաց: Թագաւոր չրեողկից զՓիրան տարաւ, ըսաց.— Փիրան, թի տիւ վոզըթընից դայիլ չիս, իմ մհուր տու, ընձի խամար վզիր ըմ խանիմ:

Հսաց.— Թագաւոր, եիս մէկ մարտու վզրթին կ'էնիմ, եիս չիմ կերի երկու Թագաւորու. վզրթին էնի:

Հսաց.— Վրէ, վնվ ի:

— Իրանայ Թագաւորի տղէն, պեոյ իմ տուն ի:

Էսաց.— Կանչըցէք կեայ դիւան:

Թագաւորու լալըղով պիրին. ասքեար կինաց չիռջիւ էնու սամալըղ պունիցին, առին պիրին, տարան Թագաւորի դիւան, պատիւ պունըցին:

Ժամանակ ըմ վերէն ընցաւ. Էլա Փիրան ըսաց.— Թագաւոր, քիւ աղջիկ տաս անոր:

Հսաց.— Սղէկ, եիս իմ ախչիկ կ'տամ մէկ մարտու, հմայ Թագաւորի տղէն ի. եիս կ'տամ անուր:

Մնաց հըման ախխաւ. հըման ուր խամար կ ուղիւ հըման ըսաց.— Թագաւոր, չէ տիւ զԹիւրան աւրիցիր, պի թըլս ահդ էնի, չրաջիւ Թիւրանայ մարտու ձեռ չ'վիրուցի. քիւ ախչիկ տու անու:

Իպի յանդեղ ահդ էրաւ, ըսաց.— Քեանի եիս Ժիր իմ, Թիւրանայ մարտու չրաջիւ ձեռ չ'վերուցիմ:

Մէկ քիւշկ ու սարթմ էնու խամա շիկից, իպի փսակից, տարաւ իտի չինի, Փիրան էլ ուր ախչիկ էտու անու:

Հըման մէկ օր իպի նամամիւթին էրաւ. իպի Թուխտ ըմ կիրից, Սիավուշի մհուր առից, էգար վերայ. «Ձատ պեարիւ իմ խօր խամար, շատ պեարիւ Ռոստամուն, շատ պեարիւ Դողարդուն, շատ պեարիւ Տիւսուն, Իրանայ փալաւանքաիրուն. տոս խաղար փալաւան կեան զի

խոսին, որ տը եխս Թիւրանայ Թագաւորի Թեախտ առնիմ, նստիմա: Մէկ եանէն էլ մարտ չեողկից, զան մարտ Թալնից, առից իպի, զթուխտ տարաւ էթալ Թագաւորի դիւան, էսաց.—Գիտէք ինչըն էրէք, առէք կեացէք նէնիր խլիսուն, զեարկիցէք, սպանըցէք:

Էլան կեացին նէնիր: Սարը մէչ տեսաւ, մէկ զեորդ ըմ տուին քեամկին. նալից, փալաւանքտիր բարաւան վերայ, տըլին չէռջիւ զիւր-վի. Ան էլ տեարձաւ վերէնքտիր, մէկին ձեռ կուտրից, մէկ վուտ կուտրից, մէկին էգար աչք էլսան (աչդ էրիր, մարտ չ'սպանը, չ'սոց զըմէն ա'սպանէր): Էլան տեարձան, ընցկուն սեախկաթ էկին տուն:

Հըման առից, տարաւ մօտ Թագաւոր զատոնք. ըսաց.—Թա-գաւոր, մա քիւ Սիավուշ ինչ էրի խա փալաւանքտիրուն:

Սիավուշն էլ կինաց ուր տուն: Յիրկուն Թագաւոր էտու կանչիլ, զփալաւանքտիր բերադի ժողվից, էնքան չադր իւժվաթ էգար Սիավուշը տան պիւլիւր, յուրս պիւլիւր պոնից:

Սիավուշը կնիկ խլիսուն քինուց վիր էլաւ, իրիշից, ինչ կ'ընը, չադր խլիվաթ էնու տան պիւլիւր փաթըթիր իւ Իրի, էսաց.—Սիավուշ միր չուրս պիւլիւր պոնած ի:

Էսաց.—Կինա իրիշի, թի քիւ խօր ասքեարն ի, էրի զը ըսա, թի իմ խօր ասքեարն ի, էլ ըմ ըսա:

Կինաց իրիշից. խօր չադր մէչ ճանչըցաւ: Իրի, էսաց. Սի-ավուշ, իմ խօր չադր գետչ մէչն ի:

Էսաց.—Դէ իրի քե վոսեաթ ըմ էնիմ. եխս աչդ իմ էրի, չ'սոց եխս անունց հաղկէն կ'կէր տիւս, ըսաց. ձը լաճ ըմ կ'ընը. արճ կը կեաց, կէլ կ'կեաց. մարտ կ'կեաց, ինչ կեաց իմ լաճ տաս տանը, մէկ մարտ տը կեաց արճիւ չէշիդ ի, իմ լաճ տաս տանը, չվեախանաս: Մէկ տեաշտ էլ պի էստեղ. իմ էրուն չ'թըղնիս ընկ'ի գետըն, զըմէն էր-թաց մեանչ էն տեաշտին, վիրուցիս, լցիս մէկ աման վէ, պերան կուպ-ղիս, տաս ան մարտ տանը:

Փիրանի ախչկան էլ ըսաց.—Առ իմ բազբանդ, թի քի լաճ ըմ էղաւ, կապիս վեար էնու Թիւին, Թորկիս էրթաց Իրանայ էրկիր, թի քի ախչիկ մ'էղաւ, ծախէք, ուտէք, իմ վոսեաթն էլ նա էր ձի:

Թագաւոր վզիրքերով էկան, տան մէչ նստան. Սիավուշ զվիզ կոռից, վիզ կտրիցին. էդ էրուն բերադի կնիկ ժողվից, ինից մէկ փարչ վէ, պերան կուպղից:

Էնու լաճ էղաւ էրկու տարեկան. չեար կ'երթաց պապկի մօտ, չ'ման կասի.—Տուէք էնու էրուն խմիմ:

Էն մէկ օր, Գիւ ի Գողարդ ուր տուն քինիր ի, մեանչ քինուն կըլը, մէկ ձիաւուր վեար էնու սրտին տեատրիր ի ըսաց.— Գիւ, ի՛ր կինա, զան տաֆալ էն քեա՛նքիրու ձեռնէն պըծը, առ պի:

Գիւ վի կ'թռնը մեանչ ուր տեղաց, կ'իրիշը մարտ չ'կայ: Իրիք տիր անցկուն մեանչ էրազին կ'ըլը: Այ չ'խարցնը ձրտեղն ի, որտեղ չի, բեռուից մնէն կ'երթայ: Փանջարու ջամիր բիրադի էնու ձէնէն կուտրան, էրեխով կնքտիր գերեխէք թըլցին. էլաւ ծռանակ ինգեաւ տիւս, կինաց: Տիրկավան առից տարաւ, էլ պեան չտարաւ: Ըցկուն կինաց եօթ տարի խրաբըջը կան իրի, ինչ եօթ տարին լմացաւ, Քեանգահու քեաղաք տիւս ինգեաւ. շուր, պեան վերայ չ'մնացիր, էլիր չփախ, էնու մազիրն ի զան ծածկիր ի Ոն օրն էլ քեաղքի տղէք բիրադի Ժողված ին, կեացած մէկ բեախչի մէջ հեոյ կ'խաղան: Գիւ զինք տուիր ի լոռջիւ բեախչի պատին. ինչ կ'նստը զլեոխ կ'երեւայ, ինչ կ'կուր, զլեոխ չերեւայ, քեամակ կերեւայ: Էդա տղէնիր տեսան, զըմէն փախան. Սիավուշը տղէն էլաւ հմայ ձեռ ետու ուր գեազոկ, կինաց, գԳիւ կ'տայ լոռջիւ գեարբի:

Ըսաց.— Զնայ տղայ, ըսաց, գքեան քի ճիւղ կէն լինի, փախան, քեան պզտիկ կէր, փախան. զըմէն փախան, տի Քնչու իկիր իս զձը կ'ծիծիս. չըս վեախանայ:

Ըսաց.— Իձ խէր վիճը մնէ վեախացիր, եիս քենէ վեախանամ:

Ըսաց.— Քիւ խէր վիճը ի:

Ըսաց.— Իձ խէր Սիավուշն ի:

Ըսաց.— Դէ, դէ կինա քիւ մօր ըսա, կեայ ըստայ: Կանչ'ց ըսաց.— Որձ էր զձը պունից թը ուտէր, եիս փախայ, եկաւ ըսաց.— Մաքէ, էն արձ ինչ տիւ կ'ըսէր, տը կեայ գքի տանը, գեոյ բեախչի լոռջիւ նստիր ի:

Մէրն էլ էլաւ էրկու սըւտակ չարշաւ առից, կինաց մէկ քեշից վեար Գիւու գլխուն, մէկ ուր գլխուն, գԳիւ առից, իպի տուն. Յետոյ կից գքեարբար իպի, զանու գլեոխ թամիզ ըմ գնդից: Գիւ էլաւ գքեարբեարի գլեոխ կտրից, խուրից մեանչ տան, որ տա չ'երթէր, կասայ էնէր: Գիւ անցկուն մնացիր էր անթը, էնու փուլի փունթիր եօթ ծալ կ'տն՛ը. ի վըր վրայ, զլաւուշ կապիր էր վերայ: Ատ էլ գԳիւ քսան օր շախից գեաղտուկ. Գիւ էլ ըմ էլաւ չառաջ կայդին:

Ըսաց.— Սիավուշի ձին չիւր ի:

Ըսաց.— Սիավուշ սպանած, ձին թորկիր իմ, կեացիր սար վէ:

Էլաւ առից զՍիավուշի տղէն, կինաց գեախ ձին: Առից գողէն, կինաց մօտխասացաւ, զձին պունիցին, առին պիրին. Յրեողկից գնալբանդ իպի, զձին նալին, զձին նալից պըծաւ, էլաւ գնալբանդու գեղոխն էլ կտրից, իտի մա քեարբեար:

Հրման էսաց.—Թանգաւուր, տը կեան զՍիւսփուշի տղէն առնին, տանին, պի սպանինք.

Փիրան էսաց.—Ահա ըլնը, ինչ տանին, եիս ձի ակախըցիմ:
Մնաց, չիրկուն Գիւ էլաւ գծին խեծաւ. զտղէն իտի իւր կիւք:
Սիւսփուշի կնիկ էսաց.—Յիս էլ տը կեամ խատ իմ տղէն:

Ադ էլ էթըլ ուր քեամակ, առից, փախաւ.

Փիրան կինաց, կանչից.—Թանգաւուր, վայայ, զՍիւսփուշի տղէն տարան, քիւ ակախիկ էլ խիտ:

Ասքեար առին ինգեան չիտիւքիր. ինչ Փիրան էր խինգ խա-
րիր փալաւան առից, ինգեաւ չիտիւ անու, մէկ էլ ճաշուս խասաւ:
Էլաւ զտղէն, մէր իտի գետըն, տեարծաւ վրէնքտիր, էրաւ կռիւ. էնու
գրգու ձէն կինաց էրկինք. էն բան ցեարտից, էդ խինգ խարիր փալա-
ւանց մէկ չ'էթուղ պրծնէր, Մնաց Փիրան. էն, Փիրան առին չիրկուր.
մարտ կէր ըսաց. «աշխար աւաւ», մարտ կէր կըսէր. «էրկնուց ձէն
կ'ըլնը, ինչ զգիւրգիր կգեարկին մէ մըկը», Գիւրգ մ'էզար զՓիրան ից-
կից գետըն. խասաւ վիզ տը կտրէր, տեսաւ Սիւսփուշի կնիկ, գէնու
մէչք կիք պանից, ըսաց.—Ինչ քիւ բեախտ, զան մը սպանի, էնի իմ
տղէն պրծուցիր:

Ըսաց.—Յիս ահա իմ էրի, ինչ մարտ չիտիւ ձի կեայ, եիս անէ-
րուն չիմ թըղնը պրծնը:

Էսաց.—Էնու ականջքիր էնքան ճիւղ ի, պի էնու մէկ ականջ
ճակի, էսաց, իրիք մարտու բարայ էրուն տ'երթայ, էլ քիւ ահա
կ'կեայ տեղ:

Էկաւ զձեռքիր կապից, մտուց ականջու ճակ ինի, ըսաց.— Դի-
աւհա էրա, չուր քիւ կնիկ քիւ ձեռքիր չարձըկի, մարտ չ'արձըկի:

Ու իթող, կինաց. Գիւ էլ ըմ առից, փախաւ:

Փիրան կինաց, տեսաւ Հրման խազար փալաւ, առի, չիտիւ կը
կեայ. ըսաց.—Հրման, տեարծի, մ'երթայ. մէկ ձենէ չ'թըղնը պրծնէք,
զըմէն տը սպանի:

Ինչըլ էրաւ, էնու խաբար չէրաւ. Հրման ինգեաւ չիտիւքիր.
չուր էկաւ խասաւ, Գիւ ըզ Ավաշաւդաւուր ընցաւ Իրանայ կնար:

Հրման կանչից վերայ.— Գիւրգ, գեաղտիկ պրծար իմ ձեռնէն:

Գիւ տեարծաւ, տ'երթ էր չիտի, Սիւսփուշի կնիկ ձեռ էթըլ, պանից,
չ'էթուղ, էսաց.—Իմ ակախիքիր գետչ մէչն ի, չըս ճանչնայ, կ'ըսպանիս:

Գիւ զտղէն առից, իպի Աստարիսու քեաղաք, Սիւսփուշի խէրն
էլ մեռաւ, զտղէն տրին պապկի տեղ Թազաւուրութին. անուս տրին
Քեաւխար իրըն Բարաք, Կերան խման, էնունք խասան ուրինց մրազ,
տիւ էլ խասնիս քիւ մրազ:

Քեանի Սիավուշի էրուհ կ'եռայ, Իրան թիւրան տը կռուին:

Ե.

Իրանայ թագաւոր մեռաւ. լաճ նստաւ տեղ: Զխօր վզիր կանչից, զփալաւանքտիր կանչից ասաց. — Յասօր եիս ինչ մարտ պանխմ, ինչ մարտ խեխտիմ, մարտ կնչ, իմ խաբրից տիւս ըլնը:

Ասին. — Զէ:

Միրօսէ Քարլի էն կեախէն խուսաւ, ըսաց. — Խա՛ ըսաց, տիւ թագաւոր իս, ինչ էնիս. կէնիս, որ տա Ռոստամ Զալու տղէն քիւ դիւան չի, տիւ ձեռ թլիս դեախ նհախ պեան, Ռոստամ Զալու տղէն կարուլ չ'էնի, որ Ռոստամ Զալու տղէն .քիւ մօտ ըլնէր, տիւ ինչ ընէր քիւ խօսքն էր

Իպի ուր խօր վզիր պոնից, վզրայ անուն էլ Տիւս ի

Ջհար կինաց Ռոստամու խամար. ասաց. — Ռոստամ, տիւ չիմանաս ինչ էղիր ի, մի թագաւոր մեռի, էնու տղէն նստի տեղ, զվրգիր կանչիր, զփալաւանքտիր կանչիր, պիրիր ի, զՏիւս պոնիր ի:

Կինաց ուր խօր ասաց. — Զալ, ըսաց, մի թագաւոր մեռիր ի, էնու լաճ տեղն ի նստի, պիրիր ի զվզիր, զփալաւանքտիր կանչիր ի, զՏիւս պրոնիր ի, տիւ թնչ կ'ըսիս, եիս էրթամ էնու հիւին էնիմ, թի չ'երթամ:

Ըսաց. — Ինչ մարտ էնունք պունած ի, ըսաց, մինք հիւի կինացիր ինք, մի հիւին մօտ ընցիր ի, էսա տալ տղայ ի, կ'իւտիսենամ հիւին մօտ չ'ընց'ը: Քեանի'մօր թըլս կենայ, նիւր չրեողկինք, հիւի ընինք:

Ռոստամ իպի զՊուրգին չրեողկից: Պուրգին էկաւ, տիմաց թագաւորին տեսարաւ:

Ըսաց. — Խնչ իկիր իս:

Ըսաց. — Ռոստամ ըսիր ի, կինա թագաւորի ձեռ պագնը, մեզնէ չի կեայ մինք էնու մօտէն հիւի էնինք, մինք հիւի էնու տունէն կ'ինինք. Տիւս պոնելու մարտ չի, Իրանայ թագաւորի բաջրողարն ի, յաթսուն փալաւան էնու տնէն կ'ըլնը:

Ըսաց. — Միրաբէ Քարլի ըսաց, եիս էնու խուսք չ'էրը, ըսաց, Ռոստամ զձիկ չ'ընդունի, էնու չաբով չրեողկիրի հիւի:

Ին էլ իպի, էնու ուրկուն գեղից, էթըլ զնգան վէ:

Պուրգին կինաց Ռոստամու մօտ:

Ըսաց. — Պուրգին, ինչը'խ էրիր:

Ըսաց. — Քիւ ուրկուն գեղից, էթըլ զնգան վէ:

Ըսաց. — Որ ացկուն ի, քեանի Տիւս մեանչ զնգանին ի, նայ իմ աչք էնու կ'ինկնայ, նայ եիս էնու տիւս կ'երթամ:

Իսկ թուխտը մ կիրից, չրեողկից տասներկու քեաղաք, չրեողկից Զաբըլ, Քաբլ, Սիսան, Զէհրուզ, Նաւրուզ, Ղանդաշար, Բաղդա, չիմ կինա չերկնացըրի, տասներկու քեաղաք էտու ախալացըրի: Մեանչ Իրանայ էղաւ կռիւ, իրարու մալ կ'տանին, մարտ կ'սպանին իրարուց:

Մէկ փալաւան կայ, անուն Թաջաւ ի. Իլաւ կանգնաւ, կինաց, կինաց թիւրանայ մէջ, կինաց Քեանդաշու քեաղաք, կինաց մատ թագաւուրուն:

Թագաւուր խալցնից մօտէն, ըսաց.—Թագաւուրու տղէն նստիր ի վեար խօր թախտուն (թը չի էնու ախալան տղէն էր, էն չարով կ'խարցնէր):

Ըսաց.—Նստիր ի, զՏիւս պանիր ի, Ռոստամ չրեողկից մօտ հիւի, Ռոստամու հիւին մօտ չ'ընցաւ Ռոստամն էլ մօտէն ուրկաւ, չրեողկից, տըսերկու քեաղաք էնու ձեռաց տակն էր, էտու ախալացըրուց, մեանչ էնունց էղաւ կռիւ, իրարու մալ կ'տանին, իրարու մարտ կը սպանին, Ռոստամն էլ չերտըցըր ի, քեանի Տիւս պանուկ ի, նայ իմ աչք թագաւուրու աչք կ'ինկնայ, նայ եիս անիւր տիւս կ'երթամ:

Թագաւուր զվզիր կանչից, ըսաց.—Փրփան, տիւ ինչ կըսիս, ինչքիս էնինք նեայ պեանին:

Ասաց.—Թագաւուր, քի պեան չիւնիս խատ էն կասին, էնունք իրարու մարտ ին.

Թագաւուր բշար էնու մօտէն կանից. կանչից մէկ էլ վզրին, ըսաց.—Հը՛ման, մեանչ Իրանայ կռիւ ի, տիւ ինչ կըսիս:

Ասաց.—Թագաւուր, տիւ իմ խօսք տ'էնիմ:

Ասաց.—Ըսա՛, քիւ խօսք մհայ ինչ խօսք ի:

Ըսաց.—Տը չրեողկինք զՂազուի Զինի Զինմաչինայ պիրինք միզի չեող, մինք էլ մի ասկեար առնինք էրթանք գիրանայ թագաւուրու թեախտ առնինք, չասօրն ի մինք գիրան աւրինք, զԹիւրան շինինք: Թագաւուր ըսաց.—Է՛, մէ խալաթ պիրէք վզրի խամար:

Խալաթ պիրին վզրին:

Ըսաց.—Իմ վզիր աղէկ փալաւան ի:

Էլան թուխտ կիրիցին, չրեողկըցին դեախ Ղազաչի Զինի. Սաքսան թաբէր ասքեար ետու չրուր, առից էկաւ, ամիսն էլ տըսերկու խղինայ զըռջավաշար ամսական ըսաց էնու: Թիւրանայ թագաւուր կանչից ուր քեաթըք իսկի, թխտիր կիրից, չրեողկից ուր ախշար, ասքեար ժողվից, խարիր թաբէր ասքեար ետու ժողվիլ, չըմէն թաբիւր տաս խազար:

Ջհար էկաւ Քեաւղսիրին.—Թիւրանայ թագաւոր էկաւ վեար քեզի կռիւ:

Էլաւ կանչից ուր փալաւանքտիր, ուր վզիր, բիրադի ժողովից, ըսաց, էկէք, տը բաշդաղ վիրցէք, էրթանք կռիւ:

Մարտ չվիրուց:

Հսին Բէդակա վիրուցի (խրոխպէրն ի թագաւորու):

Հսաց.—Եիս չիմ վիրուցի:

Հսաց.—Վրէ չըս վիրուցի:

Հսաց.—Տիւ քիւ մէր կ'տաս ձիկ, կ'վիրուցիմ. չըս իտայ, չիմ վիրուցի:

—Եիս իմ մօր խարցնիմ, իմ մէր ինչ կըսի:

Կինաց մօր խարցնից, ըսաց.—Եիս իմ ալաղդար պունի իմ, եիս իմ խրոխպօր կ'ըսիմ. էրի գրաշդաղ վիրի, էրթանք կռիւ, էն կ'ասի. քիւ մէր տաս ձիկ, կ'վիրուցիմ, չ'տաս չիմ վիրուցի:

Սսաց.—Տիւ ինչ ասիր:

Հսաց.—Եիս ասի. «իմ մօր խարցնիմ, ինչ կ'ասի»:

Հսաց.—Քիւ խզմաթ Բէդակով չի շինւը, որ Ռոստամ չը կեայ քիւ չիւզ, գճիւս չ'թորկիս, խզմաթ գլետիս չի պնըր:

Ասաց.—Եիս քի ասիմ տու, տիւ ըսիս, իմ մէր կպի իրիկ էնի. եիս քի ըսիմ, մի տա, տիւ տ'ասիս իմ մօր կպայ էնու խէր կեայ իմ քեաղաք ասրի:

Հսաց.—Որ անցկուն ի, քի տըւիր իմ մի խրոխպօր:

Գնաց, էսաց.—Բէդակ, բոշդաղ առ, էրթանք կռիւ:

Հսաց.—Ձէ, չիւր իմ խարսնիս չ'էնիս, եիս չիմ էրթանք կռիւ:

Իպի էնու խարսնիք էրաւ, գմէր փսակից վերայ, նուր էպի գթուխտ կիրից, ցրեողկից զասքեար ժողովից, զփալաւանքտիր ժողովից, երկու խարիր թաքիւր ասքեար ետու չիրուր, աստղին հաշիւ կայ, էնու ասքեարին չ'կայ:

Երկու ուրդում տիմաց իմ մէկու տրին, սաղիր գեարկեցին, էրկու խառնուան չիրուր, ընցկուն մարտ կ'ջեարտին, ինչ կարկուտ չերկնուց կեայ: Բեդակա բաշդաղ առից, փախաւ. կնիկ ընդեաւ միտ՝ Գոդարգու փալաւանքտիր մնացին մեանյ կուռն, ինուենց յորս պիւլիւր պունիցին, փալաւան ձիուց կպիրին տակ, ձիանք կ'մնան մշմուր:

Թիւրանայ թագաւոր կանչից, ըսաց.—Եիս կ'իրիշիմ, ըսաց, Իրանայ ալաղդար փախիր ի, էն վիմ ի, խատ մի ասքեարին կռիւ կ'էնի:

Հսաց.—Գոդարգն ի:

Հսաց.—Ձէ, մէկ մալբաթ ի, ոչ տիւ ըլնէք, ոչ ձե անուն, իմ ասքեար բիրադի չիտ տըւէք, Ղադաքի ճին ասքեարին էլ չիտ տըւէք:

ըզ Հմանի մայրաթ ու Գողարգուն թըղէք ցիւրիւր, մա ձը ցիւրիւ
վուրու տը փախը:

Սաղիր գեարկիցին, էրկու մայրաթ առին ցիւրիւր, էնքան մարտ
իրարուց ջեարտիցին, բէհաշիւ:

Հըման կանչից վեար Գողարգուն, ըսաւ.— Տիւ կուրցիր իս, քիւ
տուն վէրան ըյնը, ցիւրիւ ձի փախի, տիւ կուի վիր խամար կ'լնիս:

Գողարգ ըսաց.— Քեանի սաղ իմ, քեանի ճիւր իմ աչքեր կաչ,
քեանի մարտ իմ տուն կաչ, եիս ցիւրիւ քի ցիմ փախը:

Գիւ (Գողարգը տղէն ի) Բէժամուն (Գիւի տղէն ի) ըսաց —
Կինա, ըսաց, Իրանայ բաչրաղ առ, իրի, որ Իրանայ բաչրաղ
էկաւ, Հըման տը փախը:

Բէժան կինաց խասաւ մա Բէդակա, ըսաց.— Իլի բաչրաղ առ,
էրթանք, ըսաց, Հման չը փախը, իմ պապիկ ըռըկիր ի, ցի կանգը, մե
փախանքտիր բիրաղի ջեարտըւան, վըր Իրանայ բաչրաղ էրթայ,
Հըման տը փախը:

Էլաւ չ'իրի: Ան էլ գրաչրաղ առից, կինաց, կինաց խասաւ տէ-
մաց կըռուէն, Հըմանի աչք ինգաւ գրաչրաղ, Հըման ցիւրիւ փախաւ:

Գողարգ առից ուր մարտիր, տեարձաւ, ուր չաղըր տակ նըս-
տաւ, Իրիշից Բահրամ (Գողարգու լաճն ի) էն կեախէն էկաւ, ըսաց.—
Բահրամ, գլուր կ'երթաս:

Էսաց.— Իմ կամչի կուրսիր իմ, տ'երթամ, պիրիմ:

Ըսաց.— Էրթանք մէկ վոսկը կամչը քե խամար տամ շինիլ:

Ըսաց.— Եիս իմ կամչիկի խամ ցիմ, եիս իմ անուն վեար իմ կամ-
չիին կիրիր իմ, չ'ըն ըսի Բահրամ կուրսիրի, կ'ասին Բահրամ թըլիր,
փախիր ի:

Էլաւ կինաց, կինաց տեսաւ մէկ խեծիւց ըմ կ'կեայ:

Ըսաց.— Տիւ վո՞վ իս:

Ըսաց.— Եիս քիւ ախպէրն, իմ:

Անուն չ'ի:

— Հէժիր:

Կինաց տեսաւ մէկ բիրինդեար գեռչ մեանչ ճամբխին:

Ըսաց.— Տիւ վո՞վ իս:

Ըսաց.— Եիս քիւ ախպէրն իմ:

Կինաց տեսաւ, ինչ կ'իրիշի զկամչին գեարկած վեար մէկ ջամ-
դաքի, մնացիր անտեղ:

Էսաց.— Էջնիմ առնիմ, վեախենամ ըլին իմ փողպատ, զձը սպա-
նին, չ'էջնիմ առնիմ, կ'ըսին Բահրամ վեախացաւ, ուր կամչիկ չ'տարաւ:
Ձիուց էջաւ տակ, զկամչիկ առից:

Գուլագար (Թիւրանայ Թագաւորի փալատան ի, վրի ախպէրն ի, էնիւ դարաւիլ ին տրաճ վեար կամչուն) կանգնաւ, յիսուն փալատան խիտ, Բահրամու պիւլիւր պոնիցին, զպիւլիւր պոնիցին, Բահրամն էլ ըռկաւ, գետրդ մէջար Գուլագարին:

Թաջաւ կանչից վերայ, ըսաց — Թիւրանայ մարտիր, տիւ բէքախտ է.ք տիւ յիսուն փալատան կ'ըլէք մէ մարտիւ խիտ կռիւ կ'էնէք. ըսաց, Բահրամ, քեամակ տու իմ եան, քիւ բար էրա դեախ անունք:

Ըսաց. — Բեախտով կ'ըսիս, Թը բէքախտով թինով կ'ըսիս:

Ըսաց. — Նիս բեախտով կ'ըսիմ:

Էզար զյիսուն փալատան մէջդընից էխան չըռջիւ փախան. Գետրդ ըմ էզարկ կպաւ Գուլագարին. Գուլագար ձիուց էկաւ տակ, էջա, Թուր Թլէր, զվիզ կտրէր. Թաջաւ էն դեխէն Թուր էզար զԲարամու Թիւ կտրից, էրաւ էրկու տապակ:

Ղժիւց մնէն կինաց, ինգեաւ ձէժիւրի ականջ:

Գիւ յիսիւ Բահրամու կան կ'կեայ, զԲահրամ չգնդնր:

Կանչից Գողարգու, ըսաց. — Գողեարգ, Բահրամ ջիւր ի:

Ըսաց — Բահրամ կինաց զինք խոռ սպանիլ, տիւ էլ չ'երթաս, զիշիւ ի, մութ ի:

Ըսաց. — Տերթամ, ըսաց, ան զԲահրամ սաղ տի պիրիմ, ան էնու ջանդակ պիրիմ:

Գիւլագար յիսուն փալատանով էլաւ Գեու յէռջիւ:

Գիւն էլ ըռկաւ. էնու մագիր զրեխէ շապիկ խոռ տիւս. կանչից վրէնքտիր, ըսաց. — Նիս էլ Բահրամն իմ տիւք բէքախտով թինով սպանէք:

Մէկ գետրդ մ' էզար, Գիւլագար ձիուց իպի տակ, խասաւ Թուր քեշից, վիզ կտրից: Տեսաւ, Թաջաւ փախաւ, ընգեաւ յիտիւ, զԹաջաւ պոնից, առից իպի, վր Բահրամու ջանդաքին վիզ կտրից:

Բահրամն էլ մեռաւ. զԲահրամու ջանդաք իպի, զձէժիւր իպի, առից. էկաւ ուր չազրի տակ: Խէր իրիշից, տեսաւ Գիւ էկաւ. տղէմ եարալու ի, մէկ մեռիր ի. նստաւ, էլաց, Իրանցիք մնացին շիւար. քեամակ չ'ունին կռիւ էնին, մընչ կէնին փախին, մընչ կէնին կռուիւ էնին:

Էլաւ Թուխտ ըմ կիրից Թագաւորի խամար, մէկ էլ կ'րից Ռոստամու խամար, ըսաց — Տիւ յիմանաս, Իրանայ աւքեար փախիր ի, իմ փալատանքտիր ջեարտաճ ի, շուտ կեաս, ձի խասնի ս:

Ռոստամ ուր Թըզարիք տեսաւ, չըռողկից տըսերկու քեաղաք փալատանքտիր ժովից:

Իսկ զՏիւս էթող. շուրիւր խակիցուց, թագաւորն ուր թուրն չարձկից, կապից Տիւսու մէջք, զիւր խանջար քեշից, էգար Տիւսու չէմքիւ. էնքան աղուտ գէմրութ էլից Տիւսու վերայ, որ տա մարտ չէր կերը թամաշայ էնի, էրաւ հաղեայ Ռոստամու խամար: Տիւս գնաց, տեսաւ, Ռոստամ ուր թըղարէք տիսեր ի, ըսաց. — Ռոստամ, չէ՞ տիւ կ'ըսէր իմ աչք թագաւորը այք տը չընգնի. տիւ կ'ըսէր, եիս անու տրիդան չըմ էրթայ, ադ ինչ թըղարիք իս տըսի, քիւ փալաւանքտիր բարաւիր իս:

Ըսաց. — Գողարգու ընձի խօսք էկաւ, Իրանայ թագաւորի բայրաղդար փախիր ի, Գողարգու մայրաթ մնացած ինչ կըռուռն, բիրադի ջնարտած ի, եիս տերթամ, զեարկիմ զԹուրանայ ասքեար բաթմիշ էնիմ, թողիմ, կեամ: Յասօր Իրանայ Թագաւոր գբի ձիկ հաղեայ ի չրեողկիր, տերթանք էնու պեարիւ, նուր էրթանք կռիւ: Ելան էկան մըտ թագաւոր, Թագաւոր շատ ուրախացաւ. էլաւ մէկ քեաղաք փէշքէշ էրաւ Ռոստամուն, Եկան խասան, թագաւորն էլ խիտ, Գողարգուն, ուրինց չադրքիր գեարկիցին գետուն, քեանց աստղ երկնուց, աստղին հաշիւ կ'ըլնը, չադրին չ'ըլնը:

Ռոստամ մէկ կիր կիրից, չրեողկից Թուրանայ թագաւորին. — Քեո հող էրա, մինք տը կռուինք:

Էն էլ կիր մ' կիրից Ռոստամու խամար. — Մկայ աշուն ի, մինք չինք կերի կռիւ էնի, մինք շատ փալաւանքտիր սպանիր ինք, մինք խըտ իրարու բարիշիր ինք, հիմայ էլ բարիշինք չիւր գեարուն կռուիք: Ռոստամ ըսաց. — Չատ աղէկ ի, եիս տիւ կ'բարիշինք, ամա ձի ու Ղաղալի ձինի բարըշի չ'կայ, ինչ անիւր պերանն ի. կեայ վեսար իմ տեղաց կռիւ, եիս մեռիր իմ, ըսաց, թըղ ուր հեող էնի, խիլխսուն տի եիս էն կռուինք:

Թիւրանայ թագաւոր չիմացաւ թէ Ռոստամ էկիր ի կռիւ, էլաւ զիւր կուշում առից, փախաւ գիշերով:

Խլխսուն սագիր գեարկեցին. Ռոստամ կանգնաւ, զիւր սքեար առից, պիւլիւր Չինմաչինայ ասքեարին՝ պունիցին: Իրարուց էնքան սպանիցին, էրուն էլաւ զջանդաքտիր տարաւ: Իրիք օր իրիք գիշիր իրարու գեարկեցին. Ղաղալի ձինի փախաւ, Իրանայ թագաւոր լեալից չիտիւ, չորս քեաղաք էլ Թիւրանայ զաւթից:

Իրանայ թագաւոր տեարձաւ չլտ, որ սպանուաւ տիւ ողջ մնէք, որ մնաց, չիտ տեարձաւ ուր տուն. էն խասաւ ուր մրազ տիւ խասնիս քեո մրազ:

Զ.

Մէկ իրան կ'ըլնը, մէկ Թիւրան կ'ըլնը: Իրանայ թագաւորը չիր-
կուն ուր գիւան նստաւ, զմարտիր բարաւից: Թագաւորը լաճ էն գեա-
խէն մէկ նեաթեարզ խօսք մ'էտու:

Թագաւորը էսաց. վնվ նեա խօսքն էտու, եիս զան տը մլլոմ
տիւս, էրթայ:

Դիւան մնջաւ:

Էն կեախէն ըսաց. — Խնչու չըք խուսը:

Լաճ ըսաց. — Խնչ տը խուսին, էն խաբար եիսն էր տըը:

Ըսաց. — Վալայ, Հմայ տիւ ըլնիս, իմ տնէն էրթաս:

Ըլաւ լաճ եթող, կինաց Թիւրանայ երկիր տիւս ինգեաւ, կինաց
Թիւրանայ թագաւորը մօտ. տեսաւ չիրկուն գիւան էկան, փալաւանք-
տիր էկան, նստան, հռհռուց ընկիր փալաւանքտիր, մարտ չ'կերի զը-
լետիս մտուցի գիւան ինի:

Իրանայ թագաւորը տղը պերնէն խօսք տիւս չինգեաւ: Աերակուլ
պիրին, ուրինց կերակուլ կերան, ուրինց կերակուլ կերան, կըլսին մէկ
թուխտ էկաւ: Թուխտ տըլին թագաւորը ձեռ:

Քեանքիւս թագաւոր կայ, դեւերու թագաւորն ի, թուխտ էն ի
չրեողի. — Քիւ Հեող քեար էրա, մինք տը կըռւինք:

Իրանայ թագաւորը տղէն տէմ վի նստաւ վեար քեոյիրուն,
ըսաց. — Աինա, քիւ թագաւորն ըսա, զի քենէ մնաթ չ'կայ, չիր կը-
կեաս, էրի կռիւ:

Թագաւորը էնգեախէն ըսաց. — Է, տիւ մէհվան իս, տիւ ինչու
կխուսիս:

Ըսաց. — Վալայ, տիւ նորաթ չ'տէք, եիս էրթամ էնունց, եիս
ձե քեաղաք տակ տիրիւ տ'էնիմ:

Թագաւորը էսաց. — Եիս նորաթ տըլիր իմ էնու, թըլս էրթայ
կռիւ:

Խլխուն էլան, տեսան էնքան չաղր ի զեարեաճ էդ քեաղքի
պիւլիւր, քեանց աստղ էրկնուց:

Իրանայ թագաւորը տղէն կանչից ըսաց. — Սաչիս, ձին տիւս
քեշի:

Էլաւ խակեաւ քըմ զրեխ, խակեաւ զրեխէ շապիկ, կապից զթուր,
զսիլահ առից վեար ուր. էնու մաղիր ընցկուն գէժ էղան բէղիր զա-
կանջքիւր ընցան, աչքիւր շուռ առից, էլաւ զձին խեձաւ, ձեռ էթըլ
զգիւրզ վիրուց, ճապ էթըլ աջ պռնից, անցկուն ինչ խաւու ձիւ. տիր

ըմ բեռուիւց մնէն կինաց, ձէն ընդեաւ քեաղաք, շիւշաբանդիր բիրադի կուտրան էնու ձէնից, էջաւ մա մէջդընին:

Դեու թագաւուր էսաց.—Նեա աւքեար էր էկաւ, նեա ինչ էկաւ, ընցկնաց ձէն կ'կեաց:

Ըսցին.—Վալայ մէկ մարտ էկիր մեանչ մէջդընին, էնու ձէն ի, կ'կեաց:

Ըսաց.—Խասըցէք, պոնըցէք, զվիզ տըւէք տիւս:

Ատ էլ զմարտալ ետու սրտին, ինգեաւ մէջքէր, ընցկուն էրաւ, էրուն զլէշքիր կ'տանը. չիրկուն էկաւ ուր տեղ:

Խլիսուն էլ ըմ կինաց ուր կուիւ:

Իրանայ թագաւուր ուր դիւան նստաւ. փալաւանքտիր բիրադի ժողվան:

Դեւ ուր խօր ըսաց.—Գոգարդ, ըսաց, մարտիւ պեա՛մ կուրսը չիտիւ կան կ'կնաց, թի չի կեաց:

Ըսաց.—Վալայ, մարտու խաւ ըմ էլ կուրսը, չիտիւ կան կ'կեաց:

Ըսաց.—Սպա մի թագաւորը տղէն կուրսիր ի, վրէ մինք չիտիւ կան չինք իկեաց:

Ըսաց.—Վան կ'կէք, ինչու կան չէք իկեաց:

Ինք տէմ վի կայնաւ. Սէհրաբէ Քարլի էլ կայնաւ, Բէժամն էլ կայնաւ. իրիք ուրինց ձիանք խնձան, ինգեան ախշարք: Էլան կեացին, շատ քիչկ Ստուուան գիտը, կեացին Քեանգահու քեաղքի տէմաց տիւս ինգեան: Ինչ կ'իրիշին, էնքան աւքեար տեմաց քեաղքին տրիր ի, քեանց աստղ էրկնուց:

Ադ էլ ուր չադր էգար, նստաւ չանդեղ:

Թագաւուրը տղէն իրիշից, տեսաւ չադր ըմ զեարկած ճամբսը պերան. ասաց.—Վայ չկայ անունց հընդադ էկաւ, էս դարափիւլն ի չադր էգար, եիս տ'երթամ զդարափիւլ սպանիմ, չիւր անինց հաւար կեաց. Ընչան էկաւ, Գեւն էլ կինաց. էն. Գեւ առին չիրիւր: Գեւ զան վիրուց վեար քեամկին, էգար գետըն:

Իրիշից, ըսաց.—Գեւ, տիւ ինչ տ'էնիս:

Գեւ ըսաց.—Եիս քի ջեարբըցը, տիւ ինչ մարտ էր:

Գեւն էլ էլաւ, զանիկ վիրիւց իտի վեար գլխուն. էրկու սհաթուան ճամբախ տարաւ չուր մատ ուր չադր:

Ըլան թամանայ էրին. Մինք իկիր ինք չիտիւ քի, զքի առնինք, էրթանք:

Ըսաց.—Չ'է, չիւր եիս Թիւրանայ թագաւորը մօտէն հրաման չառնիմ, չիմ իկեայ:

Ասաց.—Մենք կեանք, տիւ խա մի տը կեանս:

Ասաց.—Խա, եիս կ'կեամ:

Ըլան խըտրաց կեացին Թիւրանայ թագաւորի քեաղաք. կինացին տիմաց թագաւորին տեատրան: Թագաւոր տեղ շանք էտու, նստան. Առից իբրամ էնիլ, Տեսաւ մէկ կիր էկաւ. դեերու ճւշ թուխտ խրկից. «կ'կեաս կուի, էրի, չըս իկեայ, մինք գբիւ քեաղաք կ'աւրինք, կերթանք. մինք տղայ չինք, տիւ մէկ մարտ կ'չրեողկիս կեայ մեզի կուի»:

Պեն էլ կանգնաւ. խասաւ ըզ ախանջ կտրից, տիւս էլան թուխտ պերողին, ասաց.—Կինայ քիւ թագաւորուն ասա, թըղ ուր թագաւորէք տըսնը, խլիսուն եիս էկը կուի:

Հրման էնգեախէն ասաց.—Տիւ մէհվան իս, խլիսուն մինք տ'նր-թանք կուի»:

Պեն կայնաւ վեար Հրմանին կանչից, ըսաց.—Խլիսուն եիս կուի չ'երթամ, տ'ըլնիմ ձի քեաղաք տակ տիրիւ էնիմ, իմ խաբրին տէմ տեանրձ ըլնիս:

Պեն, էլ խլիսուն կայնաւ, զիւր սիլահ կապից, զրեխէ շապիկ խակեաւ, ռաստընաւ զքաղքանդ կապից, էլաւ գձին տիւս քեշից, ըզ ոտ իտի ըռը քեր, զձին խեծաւ, ձեռ էթըլ զգեորդ վիրուց, ճապ ձեռնով կ'թլի, աջնով ձեռ կ'տայ չըռչիւ, կ'պռնի: Տիր ըմ էլ կ'անչից վեար ասքեարին, ըսաց.—Շալլա, էրթալ իմ ձեռ, կեալ Աստըծուն: Անցկուն ինչ սըմոր խաւք դաւ էնի դեախ ճընճըղկտիր, անցկուն դաւ Լրաւ մեանչ դեիրուն, Մէհրաբը Քաբըլին էլ կինաց, Քէժան էլ կինաց, թագաւորը տղէն էլ: Թիւրանայ մարտ տիւս չ'ինգեաւ, էն չուրս մէնակ կինացին, էլաւ կուի, գեարկիցին իրարու, էնքան մարտ կ'ջարտին, անցկուն ինչ քեամին տայ ճառը թաւիր շուռ տայ գետըն:

Իրանայ թագաւորը նստաւ ուր դիւան:

Ռոստամ ուր խօր ըսաց.—Ջալ, մարտիւս պեա'մ կուրսու մարտ չիտիւ կերթան, թը չի. ըսաց, չիւր ի Մէրաբը Քաբլի, Պեն, Քէժան:

Ասաց.—Վալայ, թագաւորը տղէն կուրսիր ի, կեացին չիտիւ կան կեալիւ:

Քեռուց Ռոստամու մօտէն կինաց. շուշէք բիրադի կուտրան էնու ձէնից, ըզ իւր ձին խեծաւ, եօթ աւուր կոնախ, շէնլիք չմտաւ, կինաց Քեանդահու քեաղաք տիւս ինգեաւ: Կ'իրիշի կ'ըլսը էնքան

դե ի լցուած էդ քեաղքի չուրս պիւլիւր, քեանց աստղ էրկնուց. չուրս փալաւան գեոյ մէջքիւ կռիւ կ'էնին. Լսաց.—Վալաչ, եիս տը կանչիմ վրէնքտիւր, մէր իրարուց տը շամրին, թը տը կըռւին:

Ռոստամ տիր ըմ կանչից. Բէժան ըսաց.—Գեւ իմ քեռու ձէն էր էկաւ:

Ու տիր ըմ էյ Բէժան դաստ էրաւ չինի:

Ռոստամ ասաց.—Վալաչ, մէկ գեորդ տը զարկիմ էսա մարտիւն, եօթ դասպաղաչ մտնը գետնը վէ. ինչ եիս կանչիցի, ան իրի գեալս զի կռււ:

Իրի, տեսաւ, կ'ընը Բէժան ի, գլեոխ պագնից, խնդացաւ. Գեւն էլ էկաւ, Մէհրաբը Քաբլը էլ. թագաւոր տղէն էլ կեացին Ռոստամու ձեռ, Զըռոստամ առին, կեացին Թիւրանայ թագաւորը մօտ: Թիւրանայ թագաւոր չըռջիւ Ռոստամուն կայնաւ, ըլաւ իբրամ էրաւ:

Մնաց խլիսուն Ռոստամ կայնաւ, ուր թըղարիք տեսաւ, սիւհհ կապից, զրեխէ շապիկ խակեաւ, քըմ զրեխ իտի գլեոխ, ըզ խանջար էզար մէջք, ալմաս թուր կախից, բաբլը բայեանը քիւրք էթըլ թիւ. բիւր, բէղիւր ուլուրից ականջքիւ ընցաւ, աչքիւ շուռ առին, ձեռ էթըլ զգլուրդ, գիւրդ իրիք խարիւր վաթսունը վից խոնդքեար ի. Ասաց. «Սա Աստուած», զձին խեծաւ:

Լսաց.—Անիւնց թագաւոր ինչը՞ն ի:

Լսաց.—Է՛, ըսաց, Քեանքիւս թագաւորն ի, ըսաց, կ'ընըս, նհան կապուտ չադր, ինչ մուխ կ'ընը մօտէն, անիկ էնու պերնի հէլն ի, ըսաց, մուխ չի, տիւ ինչ կէրիս էնու մօտխասնաս:

Ռոստամն էլ ըռըկաւ, գիւրդ մէզար, ինչ գիւրդ էզար, էզա ասքեար էլաւ փողան չէռջիւ, չախիւ պեացուաւ. Քեշից, կինաց վեար չադրը տռան տեատրաւ:

Դեերու թագաւոր կ'իրիշի, կընը, Ռոստամ խեծուկ չադրը տեռու տեատրիւ ի. Ձեռ կ'թըլ մէկ գեորդ էզեար Ռոստամուն, որ տա Ռոստամու ձին չըր փախիւր, զը Ռոստամ էլ զձին էլ կ'տանէր գետնու տակ:

Ռոստամ չիտ տեարձաւ, էկաւ. խատ ուր կեալուն գիւրդ ըմ տփից մեանչ գլխուն, չուր մէջք ինի մտաւ գետնը վէ, զթուր քեշից էզար, վիզ կտրից:

Դեերու ասքեար փախաւ. Ռոստամ, Մէհրաբը Քաբլի, Գիւ, Բէժան, թագաւորու տղէն ինգեան չիտիւքիւ, էնքան մարտ սպանիցին, արուն էլաւ զշամդաթալր կտանը: Թիւրանայ սնորից խանըցին, իրիք քեաղաք էլ ուրինց թըղին, փախան:

Ռոստամ չիտ տեարձաւ, ըսաց.—Վա՛լայ, տ'երթամ զԹիւրանայ քեաղաքն էլ աւրիմ, թորկիմ, էրթամ իմ տուն, էնիւնք զի հնդադ չ'էկան։

Թագաւորի տղէն ասաց.—Եիս քինէ մէկ հէվի կ'էնիմ. եիս անիւնց խաց կիրիր իմ, մ'էնի բէբախտութիւն։

Ըսաց.—Տիւ գիտիս, տըւիր իմ քեզի խաթր։

Թագաւոր կանաւ, կինաց ջըճիւքիւր, զը Ռոստամ իպի տարաւ, ուր թեախտ իտի։

Ըսաց.—2է, թեախտ քիւն ի, թագաւոր տիւ իս, եիս քիւ թեախտ չըմ նստի։

Ըսաց.—Տիւ նեա կաս աղիկութիւն խա զի էրիր, եիս քիւ աղէկիթ իւնից ինչըխ տիւս տի կեամ։

Տասւ'երկու օր իզին չ'էտու անիւնց, պախից։

Ադ էլ թուխտ ըմ կիրից, խրկից. չրեղկից Բեալկին, Բխարին Թիւրանայ քաղքընիր, ըսաց.—Ինչ Ռոստամ իկեայ, ճամբախ պըռնէք, զեարկէք, սպանէք։

Ռոստամ, չուրսով էլան, կեացին. կեացին մէկ աւուր ճամբախ քեաղքէն զատնացան, տեսան էնքան չազր զարկած, քեանց աստղ էրկնուց։

Ռոստամ թագաւոր տղէն էսաց.—Տեսմր, ինչ էրաւ, մինք աւուր սպանիր էնք, քեան զըմէն աղէկ էլ։

Ալ չ'կերցան փախին, էրթան. պռնիցին չուրս պիւլիւր, զեարկիցին։

Ռոստամ էսաց.—Բէժամ, էրի ստայ քեզի պեա'մ ըսիմ։ Թուխտ ըմ կիրից էտու Բէժամուն, էսաց.—Էս թուխտ տար տու իմ խօր ձեռ, տանը տայ թագաւոր ձեռ, մի հինդադ կեայ։

Ըսաց.—Ճամբախ չ'կայ եիս էրթամ, եիս դիւր վէ էրթամ։

Ըսաց.—Յիտ տեարձի, կինա զըվրվի, չիւրիշ ճամբխով կինաւ. Ատ էլ չիտ տեարձաւ, զթուխտ առից, չիւրիշ ճամբխով կինաց, կինաց խասաւ Իրանայ քեաղաք. տեսաւ Իրանայ թագաւոր Կաթիր ի, ինչկիաս փալաւան մարտիր կայ, բիրազի ժողուած էնու մօտ։ Էլաւ զթուխտ իտու Զալը ձեռ, Զալ կարտաց, իտու թագաւոր ձեռ։ Զալ էլեաց, ուր աթոռից վեար էկաւ։

Թագաւոր էսաց.—Զալ ինչ տ'էնիս։

Էսաց.—Տ'երթամ Ռոստամուն հընդադ։

Թագաւորն էլ չրեղկից մէկ չազր էնու խամար իպի, քեառսուն ու չուրս սուն էզար չազրի տակ, էնքան ճիւշ ի. էրկու լեակ ասքեար կանդնաւ խատ էնու։

Տիւսի Նազարին կինաց թագաւորը ձեռ, էլաւ թագաւոր մէկ չադր էլ էտու անու. էրկու լեակ ասքեար էլ էն ժողուից, տարաւ. Գողարզ կինաց թագաւորը ձեռ պագնից, ըսաց.—Ջի իզին տաս, եխն էլ էրթամ կախ էրկու լեակ ասքեար էլ Գողարզ ժողուից, առից կինաց:

Բահրամէ Ջաբալին կինաց թագաւորի ձեռ պագնից. էլաւ մէկ ոսկէ քեռլախ իպի իտի էնու գլեռլս (էնու չրախ էրաւ, զատնու էր իկիր):

Էլան չուրս կուշում չըմէն մէկ եանէն կեացին. անցկուն ինչ գեարնան ամպիր կ'գրգրան, ձէն երկնուց կ'ըլնի, էնունց նոնուց գետնուց կ'ըլնը:

Ջալ մէկ եանէն էգար. էնքան մարտ մէ մէկից ջեարտիցին, էրուն էլաւ լէշիր կ'տանը: Մէկ լեակ ասքեար Ջալուց սպանուաւ. Ջալ խասաւ մա Ռոստամ: Տիւս Նազարին մէկ էլ եանէն էգար, մէկ լեակ ասքեար Տիւսուց սպանուաւ, նուր խասաւ մա Ռոստամ: Կիրիշին, կ'ըլսին. էրկինք գետինք խառնուաւ, տիւ չըս ըսի, Գողարզ մէկ էլ եանէն կ'գեարկը, մէկ լեակ ասքեար էնու եանէն սպանուաւ, անջախ խասաւ մա Ռոստամ:

Անունք ըսցցին.—Էլ մեզի հնդադ չ'կայ, խլիտուն կախ տ'էնինք, Խլիտուն կ'ըլին ինչ կ'իրիշին, կ'իրիշին էրկինք, գետինք խառնուիր ի. Բահրամ է Ջամբալին էգար վեար Թիւրանայ դոշումին, կէս լեակ սպանուաւ, կէսաւոր մէկ խասաւ մա Ռոստամ: Իրանայ դուշում բիրադի բեարհաւան մէկ տեղ, ուրինց չադրքիր գեարկիցին: Ռոստամ ուր կսէն էնունց խամար էրաւ. Էլան պիրին սազիր գեարկիցին, էրկու կուշում առից չիւրիւր, ախշարք էլաւ թուգ, թուգ էլաւ էրկնուց իրիւս պըռնից. իրիւք օր իրիւք գիշիր իրարու գեարկիցըն, անախում իրարուց ջեարտիցին:

Թիւրանայ թագաւոր Ռոստամուն ռաստ էկաւ. Ռոստամն էլ ացկուն ըռրկաւ, մէկ գիւրզ մ'էգար, զթագաւոր սպանից:

Ջալ էն գեախէն էկաւ, Ռոստամուն էսաց.—Տալդի հէթըմ, մարտ թագաւոր չըր սպանը, տիւ ինչը թագաւոր սպանիցիր:

—Շիս էն աբով թագաւոր սպանիցը, անիկ վեար զի էրաւ բէրախտութին:

Ըսաց.—Թիւրանայ թըղիր բէ թագաւոր. չըման կ'նստի թագաւորութին, մի օլուղ չոջուղ եղսիր կ'տանը:

Ռոստամ էլ խասաւ, էնու թաջ իտի ուր գլիւս, ըսաց.—Շիս պտի ըլնիմ էնունց թագաւոր:

Կինաց եօթ տարլ Թիւրանայ երկիր նստաւ, թագաւորութին էրաւ: Թիւրանայ թագաւոր լաճն էղաւ տըս'եբրկու տարեկան. Ռոստամ չեռողկից իպի, զխօր թագ իտի լաճու գլիւս, ըսաց.—Շիս քիւ խէր սպանիր իմ, էլ ըմ թագաւորութին տըրի քի, վեար չ'ըսին Ռոստամ բէբախտ էր:

Ռոստամ առից ուր կուշում, քէշուաւ, էկաւ կոնաց ուր էրկիր, նստաւ, նուր չանդեղ կերան խման, ուրախացան. էնունք խասան ուրինց մրազին, տիւ էլ խասնիս քիւ մրազին:

Կ'ասին ինն խարիր տարի Ռոստամ ումը էրիր:

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Ա.

Աբով — պատճառով.
 Ադանց, ատանց — այդպէս.
 Ածդանար — հսկայ, վիշապազուն.
 Աղուզլամայ, արտուզլամայ — ոսկեջրած.
 Ախշար — աշխարհ.
 — Ախշար մագի փարէմ չէնի. —
 ոչ մի բանից չեմ վախե-
 նում, հոգս չէ.
 Ակախիլ — հասկանալ, ուշքի գալ,
 գարթնիլ.
 Ակախ — ուշք, միտք.
 Ակնունք — ակներ.
 Անդ էնել — ուխտել, երդուել.
 Աղէկ — լաւ, բարի.
 Անախուն — անհաշիւ, անհամար.
 Անեղ — աղեղ, լար.
 — Նիտ անեղ — նետ ու աղեղ.
 Անիւշ — անոյշ, քաղցր
 Անցկուն — անցպէս.
 Աչիչ — սեռ. աչք բառի, այից.
 Աչիկց — նայեց, տեսաւ.
 — Քիւ աչքիր չիտ պեաց — լաւ
 նայիր, լաւ հասկացիր. աչքերդ բաց
 Ապ' — ապա.
 Ապրուտ էնել — աշխատանք անել,
 գործի լինել.
 Ասկուն — այսպէս.
 Ասմանի — երկնային, կապույտ.
 Ասեաք — զօրք.
 Արանթըթախ — արիւնաթաթաւ,
 արիւնոտ.

Արուն, էրուն — արիւն.

Ացկուն — այդպէս.

Աւայ — բնակութիւն.

Աւրաւ — աւերուեց, բանդուեց.

Աքուց, աքիւց — աքացիլ.

Բ.

Բաբար — վայել, պատշաճ.

Բագբանդ — ուսկալ. թեւակալ, բաղ-
 պան.

Բաքման — լիտր, մօտ 18 գրով.

Բալաֆ — գեղեցիկ, խաժակն.

Բարաւել, բարհաւել — ժողովել.

Բաւիբոզուխ, բաշիբոզուկ — անկա-
 նոն զօրք.

Բարայ — չափ, հաւասար.

Բեաղան — թիկունք, իրան. պա-
 րիպ.

Բեաժ — հասակ.

Բեաւիլիւ — պարգև.

Բեարբեար — վարսաւիր.

Բեռուից — աղաղակ, ձայն.

Բեռալ — գոռալ, աղաղակել.

Բեքախսուրիւն — անբաղդութիւն,
 անազնուութիւն.

Բիւրադի — բոլորը, ամենը

Բիրդ — բերդ, ամրոց.

Բնար — երես, դէմք.

Բհար էտու դեախ — երեսը դարձ-
 րեց դէպի.

Բոկ — վիզ, պարանոց.

Բոյ — հասակ.

Բրախիլ — արձակել.

Գ.

Գեաղտիկ — զաղտնի.

Գեալս — կողմ.

— էն գեալսէն — այն կողմից.

Գեոյ — ահա.

Գեորգ, տ. գիւրդ — գուրդ. (պատե-
րազմական զէնք գնդաձև.)

Գիտ — գիտ.

Գիւթան — գութան.

Գիւլաւ կպան, կ'պունը — գոտե-
մարտել.

Գիւրդ — գուրդ.

Գլեոխ, գլիւս — գլուխ.

— գլեոխ թացիր իս, կեաս ըստա
գնդիս.

Գնդել — մազերը ածլել, մանա-
ւանդ գլխի.

Դ.

Դակզաք — ոյժ, գորուծիւն.

Դարբ — հարուած.

Դալիքնայ — հարստութիւն, գանձ.

Դեալս — զէպի.

Դեակոգ — դազանակ, մեծ ձեռա-
փայտ.

Դեաս ըմ շուր — մի ձեռք հա-
գուստ.

Դիւանխանե — դիւանատուն.

Դիււման — թշնամի.

Դիւր — հիւր

Դիւրբին — հեռադիտակ.

Դուռ ջաւահիր — թանգադին քար,
գոհարեղէն.

Ե.

Եան — կողմ.

Եարալու — վիրաւոր.

Եթալ — ձգեց.

Եիս — ես.

Եիտ — չետ, չետոյ.

Եղսիր — գերի.

Եղսիրութիւն — գերութիւն.

Ետու տ. էտու — տուեց

Զ.

Զախըմ — զօրեղ.

Զանգիւ — ասպանդակ.

Զատնանալ — հեռանալ.

Զարար — վնաս.

Զաւքել — չափշտակել, գրաւել.

Զը — զիս, ինձ (հայց).

Զըվրից — պըտըտեց.

Զի — ինձ.

— կեայ խատ զի կուի էնինք. —
գայ ինձ հետ կուի անենք.

Զին — թամբ.

Զնդան — բանդ.

— Թալըցին զնդէ վէ — բանդը
ձգեցին.

Զրեխէն — զրաւ.

Զօրբայ — հզօր, հսկայ.

Է.

Էթիլ, էթիլ, տ. եթալ — թող ա-
րաւ, ձգեց.

Էխան տ. խանից — հանեց.

Էնու — նորա.

Էնիկ — նա.

Էնուէք — նոքա.

Էնդեխէն — այն կողմից.

Էնկեալսէն — այն կողմից.

Էսա — այս.

Էսկիազ } այսքան
Էսքիազ }

Էտու տ. ետու, տ. խտու — տուեց
(տալ).

Էրկէն — երկայն.

Էրուն — արիւն.

— Էրուն եռաց — սիրտը բորբո-
քուեց

Էրրճալ — արածել.

Էրի, էրի — Եկ, եկաւ.

—էրի զի պեարի—եկ ինձ բա-
րև տալու, ողջունելու.
էցկից—ձգեց.

Ը.

Ըխը—տես.

Տ'ըխը { կ'տեսնէ.
Կ'ըխը {

Ընունց—նոցա.

Ըզը—ինձ.

Ընցկուն—այնպէս.

Ըպը—կ'ըպը—պէտք է.

Ըռկալ—խռովեց, բարկացաւ.

Ըսկուն—ինչպէս, այնպէս.

Ըստինա—այստեղ.

Թ.

Թաբիւր—գունդ.

Թաղարիք—պատրաստութիւն.

Թախում—խումբ, իւրացինք.

Թալան—չափշտակութիւն, կողո-
պուտ.

Թալան տանել—լափշտակել.

Թամանայ էնել—ողջոյնի նշան
անել. ձեռքը նախ դէպի գետինը,
ապա դէպի բերանը և ապա
ձակատը տանել:

Թամառայ հնել—նայել, զննել.

Թամիզ—մաքուր,

Թաջ—թագ.

Թասլիմ—խրատ, պատուէր,
յանձնարարութիւն.

Թասլիմ էրաւ—պատուիրեց,
յանձնեց.

Թաւ—տերև.

Թը—թէ, եթէ.

Թը—ուրիշ, աս.

Թըխ, —թող.

Թըմըմաւ—լրացաւ.

Թըղ տ. Թըխ—թող.

Թի—թէ, եթէ, տես թը.

Թիղարիք—տես թաղարիք.

Թիմրիցիմ—ձին մաքրել, թի-
մարել.

Թիմար էտու—թիմարեց.

Թիւ—թև.

Թորկել—թողնել, թոյլ տալ.

Թող ըզ..—բացի.

—թող զբաշխողովս—բացի անկա-
նոն զօրքից.

Թոփ էլան պիւլիւր—խմբուեցան
շուրջը.

Ժ.

Ժիր—կենդանի, առողջ.

Ժրիլ—առողջանալ, ապաքինուիլ.

Ժրիր ի—առողջացել է.

Ի.

Իզ—զի՞ծ, հետք.

Իզին—իրաւունք, արտօնութիւն.

Իլաւ տ. էլաւ—ելաւ, դուրս եկաւ.

Ինչըխ—ինչպէս.

Ինի—մէջ, մէջը.

Ինչկիաս—որքան.

Ինէ—ի նա, նորան.

—Ձեռ տամ ինէ խազար ձէն
մօտէն ըլնը—ձեռ տամ նո-
րան, հազար ձայն տայ,
դուրս գայ.

Իշալահ—Աստուծով.

Իշխրնալ—համարձակուել.

—Մարտ չ'կրլսշը—մարդ չի հա-
մարձակում.

Իստեղ—այստեղ.

Իտու—տուեց.

Իտու տիւս—դուրս տուեց.

Իրար առնել—միմեանց կպչել,
բռնել.

—էրկուս առին իրար, քիրար—եր-
կուսը միմեանց կպան,

Իրի—եկաւ, եկ (հրամ.)

- իրի տիւս — դուրս եկաւ, դուրս եկ
 Իրիշկեց — նաչեց, տեսաւ.
 Իցկից — ձգեց.
 —Ձիուց իցկից տակ—ձիուց իպի
 տակ—ձիուց ցած բերեց,
 Իհրամ էնեւ—Հիւրասիրել, պատուել.
 Լ.
 Լաչակ { կանանց գլխի շորը.
 Լաչիկ {
 Լաճ—տղայ, արու գաւակ.
 Լայրդ—վաչել, պատշաճ.
 Լարից լիտիւ-լետիւ ից վագել, ընկնել.
 Խ.
 Խաբար—լուր, համբաւ.
 —Իմ խաբրին տէ՛մ տո՛ւարձ ըլնիս
 —դու ինձ հակառակես.
 Խաբրապիր—լրաբեր.
 Խազալ—վաչրի աչձ.
 Խալաք—պարզեւ, ընծայ,
 Խալաղաք տ. խալաթ—ընծայ.
 Խալիւր—աււոր, ծերունի.
 Խակէստ—հագուստ.
 Խակիցուց—հագցրեց.
 Խամ-մարգագետին, չհերկած դաշտ
 —կեացին խամ կան կեալու--գնա-
 ցին մարգագետիններ զբօս-
 նելու.
 —Ջրմէն իմ խամ ըլնը.—բոլոր
 ինձ համար լինի, ես պահեմ
 Խամա—համար, վասն.
 —քե խամա—քեզ համար.
 Խանջար—դաշույն.
 Խաշք—հասկ, ցողուն.
 —խաշք վեար օտաց չըն թորկի
 —հասկ կամ ցողուն կանգուն չեն
 թողնի, կ'տորեն.
 Խասաւ—հասաւ.
 Խատ—հետ, միասին.
 Խարիր—հարիր.
 Խարցում, խարցումս—հարց, հար-
 ցում.
 Խարցմունք—հարց, հարցմունք.
 Խարցմունք էրաւ—հարցրեց
 Խարամիր իմ—կեղտոտել եմ, պըղ-
 ծունել եմ.
 Խարսնիք—հարսանիք.
 Խաւ—հաւ.
 Խեծաւ—հեծաւ.
 Խեծուկ—հեծեալ.
 Խերիք—հերիք.
 Խզմաքֆեար—ծառայ.
 Խզմթեն պկեր կկեաս—ծառայու-
 թեան պէտք, հարկաւոր
 կլինիս.
 Խէյվաք—վրան.
 Խիւր—հալը, հէր.
 Խըզինայ դափինայ—գանձ.
 Խըտիրաց, խըտրաց—միմեանց հետ,
 միասին.
 Խիւլ—միտք, հասկացողութիւն,
 կարծիք.
 Խինգ—հինգ.
 Խիտ—հետ, միասին.
 Խիւաթ—վրան.
 Խիւնդար—հիւանդ.
 Խլիսուն—վաղ առաւօտեան, լու-
 սածագին.
 Խմար, տ. խամար, խամա—համար
 Խոկի հոգի.
 —Քիւ խոկին անկրող տ'աւնիւմ—
 առանց գրողի հոգիդ պէտք է
 առնեմ
 Խոզմաք—ծառայութիւն.
 Խոդ—հող.
 Խունդար—արունարբու, վրէժ-
 խնդիր?
 Խուսաւ—խօսեց
 Խուր—հօր, սեւ. «խէր»-ի.

Խուրել — հորել, Թաղել.

Խրկից — ուղարկեց.

Խրոխպէր — հօրեղբայր.

Ծ.

Ծաղկտիր — ծաղիկներ.

Ծուռ — չմար, խենթ.

Ծռանակ — խենթի նման.

Կ.

Կակոյ — որդին աչքպէս է կոչում հօրը.

Կամբո — եղէգն.

Կայնաւ — կանգնեց.

Կամչի — մտրակ.

Կան էկաւ — պըտըտեց, ման եկաւ.

Կան կեալ — ման գալ.

Կաչաղ — լրտես? փախստական.

Կասայ — պատմութիւն, դէպք.

Հէքիաթ գրուց.

— կասայ էնիլ — պատմել,

Կարաւաշ — աղախին.

Կարքից — ամուսնացրեց.

Կեախ — ժամանակ, հէնց.

Կեանգատ — զանգատ.

Կեարցան — կարողացան.

Կեացին — գնացին.

Կերակուլ — կերակուր.

Կեռիւել — կոխել.

Կըպը — պէտք է.

Կիւք — գոգ, գիրկ.

Կոնաղ — հիւր.

Կոնդ ու քիւս — կոնդ (անդամալոյճ) ու քոսոտ?

Կոն — սև վրան քրդական.

Կոչախ — քաջ.

Կոռեց — խոհարհեցրեց, ծռեց.

Կուռում — գօրք.

Կուչախ }

Կոչաղ } քաջ.

Կուպղից — կողպեց.

Կուրիկ — կորեկ.

Կուրուղչի — պահապան.

Կուտրուաւ — յաղթուեց.

Կուրսաւ — կորաւ.

Կուց — բուռն, ափ.

Կուան — մեծ մուրճ.

— Կ'տայ չէնջիւ կուանի — կուանել, մուրճով ծեծել.

Կտուր, կտուրքիր — կտորներ.

Կքել — լարել, պինդ քաշել.

Կքից ճակիր — լարեց զէնքերը, աղեղի լարումն.

Հ.

Հաղիայ — ընծայ.

Հազ — սէր.

— Հազ ունէր մօտէն — սիրում էր նորան.

Հայ — վիճակ, գրութիւն.

Հ'ախ — վարձ.

Հայստախամայ — ախոռատուն

Հայնկ հաղկ — տես հախ.

— Ծիս էնունց հաղկէն կ'կէր տիւս. ես կ'իմանայի, թէ ինչ կանէի. վրէժխնդիր կլինէի.

Համայ — հէնց, իսկոյն, բաց.

Հազար էրաւ վեար — (պարիսպ քաշեց) կախարդեց.

Հեղ — անգամ.

Հեղ — գնդակ.

Հեղքեար էրաւ — պատրաստուեց.

Հմայ ինչ մարտի Ռոստամ — տեսնեմ...

Հնդաղ — օգնութիւն.

Ձ.

Ձինէ — ինձանից.

Ձիւր — ձոր.

Ձը — ինձ.

Ձե — ձեր.

Ձէն—ձայն.

—խաղար ձէն մօտէն ըրնը — հազար
ձայն հանէ, տայ.

Ձէն մնէն իլաւ,— ձայն տունեց.

Ձի }
Ձիկ } ինձ

Ձիւ—ձու.

Խաւու ձիւ—հաւի ձու.

Ղ.

Ղամափեաբբանդ—սպարան (զե-
րիներ) բռնելու.

Ղաբաւառ—աղախին.

Ղաբաւիւլ—պահապան

Ղափուգէրի ի խեյլար—վրան զար-
կել, լարել.

Ղիամար—դատաստան.

Ղոռուն—զօրք.

Ղուրուղչի—սլահապան անդերի
և մարգագետինների.

Ճ.

Ճալ, իր—զէնք, եր.

Ճամբալս—ճանապարհ

Ճամբախ խիտ էրթալ—ճանա-
պարհով գնալ—

Ճապ—ձախ.

—ճապ ձեռնով կթլի, աջնով
ձեռ կ'տայ յիռջիւ. ձախով—

կձգէ, աջով կբռնէ

Ճեռ—սերունդ, մնացորդ,

Ճիժ երեխայ, մանչ.

—խատ ճժիւրուն—երեխաների
հետ.

Ճիւկ—առանձին, ճոկ.

Ճիւչ—մեծ.

Ճիւր—ջուր

Ճիւր էնել—ջրել, ոռոգել.

Ճխտից—սեղմեց. ճգմեց.

Մ.

Մա—մօտ.

Մալ—ապրանք.

Մալբաթ—ընտանիք, ընդոճին.

Մաղդէն էրաւ—քիթը կախ ձգեց,
տխրեց.

Մաղկուլ—վեհանձն, երեսիլի.

Մաչ—մէջ.

Մառախուն—մառախուղ, մէգ.

Մատ տ. մա.

Մատակ—էգ ձի.

Մատքիր—մատներ

—Մօր կաթ մատքիր վէ իտու
տիւս,—մօր կաթը մատներից
դուրս տուեց.

Մարտալ—վահան.

Մե—մեզ (զերանուն)

Մեհվան—հիւր.

Մեյրան—հրապարակ.

Մէչ—մէջ,

—Մէչ վէ էրթալ—միջով գնալ.

Մէրան—մակարդումն.

—Մարդ մէկ պղինձ կաթ կ'լթի
էնու մէրան չ'ըլըցի մէչ,
չ'ըլընը մաճուն.

Միւր—մեր

Մհա—տես (հրամայական).

Մհինք—տեսնենք.

Մհուր—կնիք.

Մաղաղաւ, մըղաղար—ժամանակ,
նախասահմանութիւն.

Մնաթ (մուննաթ)—պարտաւորուել
մէկի առաջ, երեխտապաշտ
մնալ.

Մնէն—նորան, նորանից.

Մուրու—խորթ մայր,

Մրազ—իղձ, նպատակ.

Մօ, տ. մա, տ, մատ—մօտ.

Մօտխասցաւ—մօտեցաւ.

Յ.

Յարով—արով—պատճառով.

Յախալիւր-նիր-աղբիւր-ներ.

Յերըկը-երեկուան.

Յեղէն-սենեակ, օդայ.

Յիւր, յիւրի-հւր, հւր է.

Յէշունց էտու-հայհոյեց.

Յիւր-երբ.

Յիւա էնել-կեղծել, խաբել.

Յիւջիւ-առաջ.

Յիտիւ-յետոյ, յետեից.

Յիւր-հւր, ինչու.

Յիւրիշ-ուրիշ.

Յիւրիւր-իրար, միմիանց.

—Իտու յիւրիւր-իրար ձգեց, հա-
ւաքեց միասին.

Յրեոխկիլ } ուղարկել

Յրեողկել }

ն.

Նալ-պայտ.

Նալբանդ-պայտառ.

Նամամիւրին-բանասարկութիւն,
դաւաճանութիւն.

Նալիւր, նալիւր-բիր-ճառայ.

Նեկիւր-որս.

Նեքիզ խամջար-դաշոյնի մի
տեսակը.

Նիտ-նետ.

Նիտ անեղ-նետ և աղեղ

Նիւր-նոր.

Նոբաթ-հերթ, կարգ.

Նմուշ-դէմք, երես.

ը.

Ջախիլ-պահել, սնուցանել.

Ջանգառի, ժանգառի-կապոյտ.

Ջանք տալ-ցոյց տալ.

—Էնու պերան կուտրէր, ինչ քի
շանք ի տուի.

Ջեֆիլ-պատկեր, դէմք.

Ջիկից-սարքեց կարգաւորեց.

Ջիրիկ-ընկեր, մասնակից,

—փրթիճիւ շիրիկ-հացի մաս-
նակից, կին?

Ջիֆիլ

Ջիֆիլաթ } տ. շէքիլ.

Ջուտաբանդ-լուսամուտ ապակի-
ներով.

Ջիւր

Ջուր } հագուստ.

Ջիւտ-շուտ.

Ո.

Ումուդ-յուս

Ումր-կեանք.

Ունչ-ինչ.

Ուր=իւր.

Ուրդու-բանակ.

Ոքիր-ոտքեր.

2.

2ադր-վրան.

2ախ-ժամանակ.

—չուր էն չախ-մինչև այն ժա-
մանակ.

—էն չախից եիտ-այն ժամա-
նակից յետոյ.

2ախու-դանակ, սուր,

2ալիւր-մարգագետին.

2եքիդ-տեսակ, նման.

2իւոյ-ապա թէ ոչ.

2ուր-մինչև.

2փլախ-մերկ.

2ոյ-անբնակ դաշտ, անապատ.

Պ.

Պազնից-համբուրեց.

Պախից-պահեց.

Պալա-հետիոտն.

Պեախ-բահ, փորելու գործիք

Պեան-բան, գործ.

—պեան քենէ չի կեայ-քեզնից
բան չի դուրս գալ, չես կա-
րող գործ կատարել.

—վրը պեանի՛մ կապել—մի հնար
գտնել, մի գործով կապել,
գրադեցնել.

Պղտիկ—փոքր.

Պըւեռ պըւըւնիր—բւեռ, մեխ.

Պի—բեր (բերել)

Պիւլիւր—բոլոր, շուրջ.

Պիւռ—բուռն, սրի կոթ, բռնե-
լու տեղը.

Պկեր—պէտք, հարկաւոր.

—խզմթիւն պկեր կկեաս—ծա-
ռայութեան պէտք կգաս.

Պրծաւ—աներևութացաւ.

Պռնաւոր—բանտարկեալ, բանտ.

Ջ.

Ջամ—ապակի.

Ջաւանիր—ակունք, գոհար.

Ջեք—գրպան.

Ջըւան—քուռակ.

Ջիւղկի—գոյգ, ջուխտ.

Ջիւաք—լուր, պատասխան.

—Ջհար յինք կէրի տայ—պա-
տասխան յենք կարող տալ

Ջոհաք, ջուաք տ ջհաք.

Ռ.

Ռասս էկան—հանդիպեցան

Ռեանց—գոյն.

Ռըբեք—ասպանդակ.

Ռոմի—սև.

Ռուսդէ—անառակ, անբարոյական

Ս.

Սադադէն—կարողութիւն.

Սահրանգէ—մարգագետի.

Սամախոր—երկաթ, երկաթի ձող.

Սալիսիւ-ֆիր—ձիապան.

Սալա—շնորհ, հովանի.

Սանդուղ—սնդուկ.

Սարխոս—արբած, արբեցած.

Սեախկաք—յաշմանդամ.

Սերտ—սիրտ.

—Սերտ եռաց վերայ—

սերտ էնու վերայ եռաց

—սիրտը մորմոքեց.

Սեհր եհիլ—գրօսնել

Սեհիլի

Սեյր } կախարդութիւն անել.

Սեյրանջի—գրօսանք

Սիլախ կամ սիլահ—զէնք.

Սիհի—մատուցարան, սկուտղ.

Սլւ—սև.

Սնոր—սահման.

Վ.

Վարիաք—ստացուածք.

Վեար—վերայ.

Վեար էնել—վարել, հերկել.

Վեաղ—վաղը, առաւօտեան.

Վերէնքտիր—վերայ

Վգիր—վեզիր, նախարարապետ.

Վիգ—պարանոց.

Վիր—հւճ.

Վիրու—վալրենի.

Վիրուց—վերցրեց.

Վոսեար—կտակ.

Վով—ով.

Վուտ, քիր—ոտ, ներ.

Վուր—որ (յարաք. դէր.)

Վրէ—Ռնչու.

Տաբադէն—տակ, ծալք, աստիճան.

—Տօթ տաբադէն գետնի տակ
մտնիս

Տ.

Տալ—դեռ ևս.

Տակ վիրիւ էնիլ } քանդել,

Տակ տիրիւ էնիլ } կործանել.

Տամանուրիւ—ազահութիւն.

Տամանֆեար—ազահ

Տապկից—տապակ արաւ, երկու
մաս արաւ.

Տափալ, տըփըլ—երեխայ.

Տեռու, տիււ — գոււ.

Տեղ — երկիր,

— Իրանայ տեղ—Իրանայ երկիր.

Տեսակով— գեղեցիկ կերպարանքով.

Տէմաց—դէմ, յանդիման.

— էն տէմով—այն մտքով, տեսակէտով.

Տըսւերկու — տասներկու.

Տը } պէտք է, «կը», ապառնի

Տի } մասնիկը.

Տի—դրեց

Տիր ըմ—մի անգամ.

Տիրկեաւան — նետ անեղ.

Տիւ—դու. (դերանուն)

Տիււ — դոււ

Տղէտներ — տղաներ.

Տօն — տուն.

Տփեց — խփեց, զարկեց, ծեծեց.

Փ.

Փայաւան } փալաւան, քաջ տը-

Փայիւան } դամարդ.

Փանջաբայ — լուսամուտ.

Փուխ — փոխ, փոխարէն.

Փունթ — ծալք.

Փուր — փոր.

— Փուր առից գետըն — փորը

գետնին կալաւ.

Ք.

Քաթըպ — գրագիր, գիր անող,
Քեայիւ ձի — նոյն.

Քանց աստղ յերկնուց — երկնքի
աստղերի չափ.

Քե — քեզ.

Քեամակ — մէջք, թիկունք.

Քեամանդ — պարան, թու.

Քենէ — քեզնից,

— քենէ գիտիմ — քեզ տեսնեմ.

Քեռչ, քեռչիւր — ծունկ, ծնկներ.

Քէֆ — զբօսանք, ուրախութիւն.

— ուրինց քէֆն ի, — կամքն է.

Քի — քեզ.

Խատ քի — քեզ հետ.

Քիւ — քո.

Քիւս — քոս?.

Օ.

Օլոււաղ — կին, կանայի սեզը
ընդհանրապէս.

Օմր — կեանք.

Օրդում — բանակ.

Օրբախ — ընկեր.

Ֆ.

Ֆերիզ — հսկայ, քաջ մարդ *)

*) Ծանօթ. Հետեալ համարում կհրատարակինք Տ. Գարեգին վարդապետի տղի, ղէպին վերաբերեալ աւսումնասիրութիւնն ու լիզուարանական նկատողութիւնները.